



Sparkassen-ի

դպրոցական ծառայություն

# ՄԱՐԴԻԿ, ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ ՓՈՂ

**Տարրական տնտեսական կրթության հիմունքներ  
երիտասարդների համար**

Աշխատանքային տեղի ավագ դպրոցի համար ֆինանսական անձնագիր  
ստանալու նպատակով





**Հանս Յուրգեն Շլյոսեր, Միխայել Շուլհեն, Մարկո Ռեմ,  
Կարեն ֆոն Կիբեդի Վարգա**

## **Մարդիկ, շուկաներ և փող**

Ֆինանսական անձնագիր ավագ դպրոցի համար

Նյութը տրամադրվել է Sparkassen-ի դպրոցական ծառայության կողմից՝ Հարավային Կովկասում, Ուկրաինայում և Իրանում իրականացվող Պատասխանատու ֆինանսավորում տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միջազգային համագործակցության գերմանական խնայբանկերի հիմնադրամի կողմից և ֆինանսավորվում է տնտեսական համագործակցության և վարգացման դաշնային նախարարության կողմից:

**Շտուտգարտի գերմանական Sparkassen հրատարակչություն  
(Deutscher Sparkassenverlag Stuttgart)**

## Հեղինակներ

Տնտեսական կրթության կենտրոնը հմտությունների կենտրոն է, որը տրամադրում է տնտեսագիտական գիտելիքներ ինչպես աշակերտների և ուսանողների, այնպես էլ շարունակական կրթության համար:

Դոկտոր պրոֆ Հանս Յուրգեն Շլյոսեր  
Զիգենի համալսարանի Տնտեսական կրթության կենտրոնի (ZöBiS) ղեկավար

Դոկտոր Միխայել Շուհեն  
Զիգենի համալսարանի Տնտեսական կրթության կենտրոնի տնօրեն

Մարկո Ռեմ և Կարեն Ֆոն Կիբեդի Վարգա  
Զիգենի համալսարանի Տնտեսական կրթության կենտրոնի (ZöBiS) աշխատակիցներ

## Ցուցումներ

«Աշակերտ» և «ուսուցիչ» ձևակերպումները ներառում են նաև «աշակերտուհի» և «ուսուցչուհի» ձևերը: Այս տարբերակներն ընտրվել են՝ ընթերցանությունը հեշտացնելու նկատառումներից ելնելով:

## Հեղինակային իրավունք

Գրքում ներառվել են հեղինակային իրավունքով պաշտպանվող ստեղծագործությունների բոլոր հղումները, սակայն դրանց ամբողջականությունը կամ ձգբոլությունը երաշխավորված չէ:

© Գերմանական Sparkassen հրատարակչություն ՄՊԸ, Շտուտգարտ (Deutscher Sparkassen Verlag GmbH, Stuttgart), 2017

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Այս ձեռնարկը բոլոր բաժինները ներառյալ, պաշտպանված է հեղինակային իրավունքով: Առանց հրատարակչության համաձայնության ձեռնարկի կիրառումը անթույլատրելի և պատժելի է հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ: Այն չի կարող վերարտադրվել էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և այլ եղանակներով:

Խմբագիր՝ Բիրգիտ Շտեֆան  
Տպագրիչ՝ Մարի Գեև  
Շապիկի ձևավորում՝ ըստ Groothuis-ի, Lohfert-ի, Consorten-ի, glcons.de-ի գաղափարի, Համբուրգ  
Տեքստը՝ Հանս Յուրգեն Շլյոսեր, Միխայել Շուհեն, Մարկո Ռեմ, Կարեն Ֆոն Կիբեդի Վարգա  
Նկարներ՝ Մաթիաս Ջեբուրգեր  
Համակարգչային ձևավորում՝ visee-design.de, Շտուտգարտ  
Տպագրություն և կապ՝ Schätzl Druck & Medien, Դոնաուվյորթ  
Տպագրված է Գերմանիայում:

1-ին հրատարակություն, 10/2008  
8-րդ հրատարակություն, 11/2017  
310 716 400



# Մարդիկ, շուկաներ և փող

Ֆինանսական անձնագիր ավագ դպրոցի համար

<b>1</b>	<b>Պետություն, տնտեսություն և հասարակություն</b>	
1.1	Հիմնահարցեր	4
1.1.1	Տնտեսաքաղաքական գործունեություն վարելը նշանակում է ընտրություն կատարել	4
1.2	Հիմնարար արժեքներ և տնտեսական քաղաքականություն	6
1.2.1	«Ազատություն» հիմնարար արժեք	7
1.2.2	«Արդարություն» հիմնարար արժեք	7
1.2.3	«Անվտանգություն» հիմնարար արժեք	7
1.2.4	«Առաջընթաց» հիմնարար արժեք	8

<b>2</b>	<b>Տնտեսություն + քաղաքականություն = տնտեսական քաղաքականություն</b>	
2.1	Շուկայի ու պետության խնդիրներն ու իրավասության սահմանները	9
2.1.1	Շուկայի դերն ու սահմանափակումները	9
2.1.2	Տնտեսական քաղաքականության նպատակները	13
2.1.3	Տնտեսական քաղաքականության գործիքները	15
2.2	Տնտեսական քաղաքականության դերակատարները	15
2.3	Տնտեսաքաղաքական գործունեության ոլորտներ	16
2.3.1	Պետական միջամտությունը տնտեսությանը	16
2.3.2	Մրցակցային քաղաքականություն	17
2.3.3	Կայունություն և աճ	18
2.3.3.1	Կայունության քաղաքականություն	18
2.3.3.2	Աճ և շրջակա միջավայր	20
2.3.4	Արտաքին առևտուր և արժույթ	21

<b>3</b>	<b>Ո՞րն է սոցիալական շուկայական տնտեսության «սոցիալական» բաղադրիչը</b>	
3.1	Սոցիալական քաղաքականություն	22
3.1.1	Սոցիալական քաղաքականության նպատակները	22
3.1.2	Սոցիալական քաղաքականության սկզբունքները	22
3.2	Սոցիալական քաղաքականությունը Հայաստանում	24
3.2.1	Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականության ռազմավարական ուղղությունները	24
3.2.2	Սոցիալական աջակցության ծառայությունները Հայաստանում	25
3.2.2.1	Նպաստներ և կենսաթոշակային համակարգ	25

<b>4</b>	<b>Ունեցվածքի ձևավորում և կենսաթոշակային ապահովում</b>	
4.1	Պետք է սովորել և կարողանալ խնայել	26
4.2	Կենսաթոշակային համակարգերի գնահատման չափանիշները	27
4.3	Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը	28
4.3.1	Կենսաթոշակային համակարգը մինչ բարեփոխումներ	28
4.3.2	Կենսաթոշակային համակարգը բարեփոխումներից հետո	29
4.3.3	2-րդ աստիճանի կամ կուտակային բաղադրիչի մասնակիցները	29
4.3.4	Բաղադրիչի պարտադիր լինելու սկզբունքը	29
4.4	Ժամանակ և տոկոսադրույք	30

# ԲԱԺԻՆ 1

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



### 1.1 ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

#### 1.1.1 Տնտեսական քաղաքականություն վարելը նշանակում է ընտրություն կատարել

➔ **Տնտեսագիտության մեջ առաջնահերթ խնդիր է տնտեսական սուբյեկտների կարիքները բավարարելու համար անհրաժեշտ ռեսուրսների սակավությունը: Առկա ռեսուրսները հիմնականում բավարար չեն մարդկանց կարիքները բավարարելու համար: Այդ պատճառով տնտեսվարող սուբյեկտները պետք է կատարեն ընտրություն, որը ենթադրում է այլընտրանքների գնահատում:**

Պատկերացրե՛ք մի իրավիճակ, երբ քննարկման է դրված համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը: Համայնքի ավագանու անդամները պետք է որոշեն, թե ինչի վրա ծախսել առկա գումարը՝ երիտասարդական նոր ժամանցի կենտրոնի, թե քաղաքի կանաչ տարածքները խնամելու համար նոր բեռնատար գնելու: Կամ արդյո՞ք տվյալ տարածքը պետք է դառնա արդյունաբերական կենտրոն, թե՞ բնապահպանական նկատառումներով պետք է մնա չկառուցապատված: Որոշում կայացնելու նպատակով պետք է հաշվի առնվեն ոչ միայն ֆինանսական ասպեկտները, այլ նաև երիտասարդների ու կանաչապատ տարածքների առումով մտահոգության աստիճանն ու առաջնահերթությունները:

Հաճախ սակավության պատճառ կարող է դառնալ այն հանգամանքը, որ, չնայած կարիքները բավարարվելու և տարբեր են, հասանելի գումարը կամ, վերոնշյալ օրինակում, հասանելի հողակտորը մեկն է: Եթե որոշում է կայացվում գնել բեռնատար մեքենա քաղաքի կանաչ տարածքները խնամելու համար, այդ դեպքում երիտասարդների ապատ ժամանցի կազմակերպման համար նախատեսված տարածքն այլևս հնարավոր չի լինի ձեռք բերել: Եթե անձը որոշում է կայացնում իր առջև դրված տարբերակներից մեկի օգտին, ապա նա ստիպված է հրաժարվել մյուսից: Սա կոչվում է այլընտրանքային ծախս: Երբ գումարը չի բավականացնում միաժամանակ մի քանի ցանկություն իրագործելու համար և անհրաժեշտ է կատարել ընտրություն: Մեր օրինակում երիտասարդների ժամանցի առավել լավ կազմակերպումը կանաչ տարածությունների բարելավման այսպես կոչված այլընտրանքային ծախսն է: Այսպիսով եթե առկա են ընտրության մի քանի տարբերակներ, ապա գրավիչ հնարավորությունից հրաժարվելու արդյունքում ստեղծվում է այլընտրանքային ծախսը: Առհասարակ տնտեսական քաղաքականությունը պահանջում է արդյունավետություն. հասանելի ռեսուրսները պետք է ոչ միայն ներդրվեն արդյունավետ կերպով, այլ նաև նպաստեն ամենաբարձր արդյունքներին հասնելուն: Սա

#### Տնտեսական կարևոր հասկացություններ

**Այլընտրանքային ծախսը** դա գումարային արժեքն է, որը հնարավոր էր ստանալ ռեսուրսների օգտագործման այլընտրանքային տարբերակն ընտրելու դեպքում:

**Ապրանքների սակավությունը** հանդիսանում է տնտեսական հիմնախնդիր, ինչից հետևում է, որ մարդկանց սկզբունքորեն անսահմանափակ կարիքների միայն մի մասը կարող է բավարարվել: Ապրանքների ապահովումը կարող է իրականացվել համապատասխան տնտեսական գործունեության ծավալման արդյունքում: Որքան սուղ է ապրանքը, այնքան բարձր է նրա գինը:

կոչվում է տնտեսման սկզբունք: Լրացուցիչ բեռնատարը կարող է արդյունավետ լինել, այսինքն բարձրացնել կանաչ տարածքների որակը: Սակայն արդյո՞ք դա ռեսուրսների արդյունավետ ներդրում է:

**Առաջադրանք 1**

Այլընտրանքային ծախսի գաղափարը **փոխադրե՞ք** առօրյա իրավիճակների վրա. օրինակ մտածե՞ք Ձեր առևտրային որոշումների մասին քաղաքում շրջելիս:

**Առաջադրանք 2**

Ձեր առօրյայից առավելագույնի և նվազագույնի սկզբունքների կիրառման ինչ օրինակներ կարող եք մտաբերել:

**Առաջադրանք 3**

Հունաստանում անցկացրած արձակուրդների ժամանակ դուք գնել եք թանկարժեք գինի: Տուն գալով՝ հիասթափված պարզվում եք, որ իրականում գինին ունի խցանի տիպի համ, ինչի պատճառով այն անհնար է վայելել: **Փորձե՞ք** բացատրել, թե ինչ կապ ունի այս խնդիրն այլընտրանքային ծախսի գաղափարի հետ:



**Ո՞րն է տնտեսման սկզբունքը:**

Այս սկզբունքը վերաբերում է սուղ ռեսուրսների պայմաններում տնտեսության առջև դրված նպատակների իրագործմանը: Օրինակ ինչպե՞ս ստանալ առավելագույն օգուտ, կամ ինչպե՞ս ձեռնարկությունն ապահովի առավելագույն շահույթ: Տնտեսմանը հասնելու համար տնտեսագիտության մեջ առկա են երկու հիմնական սկզբունքներ:

Առաջինն առավելագույնի սկզբունքն է, որի նպատակն է առկա ռեսուրսներով հասնել առավելագույն արդյունքների, իսկ մյուսը նվազագույնի սկզբունքն է, որը ենթադրում է տրված նպատակին հասնել հնարավորինս քիչ ռեսուրսներով:

**Ի՞նչ է նվազագույնի սկզբունքը:**

Ըստ այս սկզբունքի տրված նպատակին պետք է հասնել հնարավորինս քիչ ռեսուրսներ ներդնելով: Օրինակ՝ ձեռնարկությունը մտադրվում է գնել ինչոր հաստատուն ծավալի հումք հնարավորինս ցածր գնով:


**Ի՞նչ է առավելագույնի սկզբունքը:**

Ըստ այս սկզբունքի առկա ռեսուրսներով պետք է հասնել առավելագույն արդյունքի: Օրինակ՝ ձեռնարկությունը պետք է փորձի առկա ռեսուրսներով մեքենաներով, անձնակազմով և հումքով, ապահովել հնարավորինս մեծ արտադրական ծավալ:

## 1.2 ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

→ Ազատ և ժողովրդավարական հասարակություններում պետությունը քաղաքացիներին չի թելադրում անհատական արժեքներ. ամեն մեկն իր համար է որոշում, թե ինչպես պետք է կառուցել «ճիշտ» և «լավ» կյանք: Փոխարենը տնտեսական քաղաքականությունը սահմանվում է ըստ որոշակի կանոնների և հիմնարար արժեքների, որոնց շուրջ հասարակության մեջ կա համընդհանուր համաձայնություն:

Յուրաքանչյուր հասարակություն կարիք ունի հիմնարար արժեքների շուրջ նման համաձայնության, հակառակ դեպքում այն կկորցնի իր կայունությունը, իսկ առանց նման կոնսենսուսի հնարավոր չէր լինի արդյունավետ կերպով վարել քաղաքականություն հասարակությանն առնչվող հարցերում:



**Տնտեսական քաղաքականության մեջ հատուկ դեր ունեն հասարակական հետևյալ հիմնարար արժեքները.**

**Ազատություն - Արդարություն - Անվտանգություն - Առաջընթաց**

Նույնքան կարևոր են նաև **ժողովրդավարության** և **բանականության** արժեքները: Տնտեսական քաղաքականությունը առաջնորդվում է նաև այս արժեքներով: Որոշումները պետք է կայացվեն ժողովրդավար ճանապարհով և ուղղորդվեն բանականությամբ:

Հասարակական հիմնարար արժեքները դիտարկվում են որպես տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչներ: Տնտեսական քաղաքականությունը և նեղ իմաստով տնտեսական քաղաքականության նպատակները, ինչպիսիք են, օրինակ, հասարակության լիարժեք վերականգնության և գների կայունության ապահովումը, ծառայում են այս հասարակական հիմնարար արժեքների իրագործմանը:

### Ի՞նչ է պլանավորման քաղաքականությունը:

**Պլանավորման քաղաքականության** հիմքում ընկած են բոլոր օրենքները, կանոններն ու կարգերը, որոնք թույլ են տալիս տնտեսությունը կազմակերպել շուկայի և մրցակցության սկզբունքներին համապատասխան: Ընդ որում հատկապես կարևոր է երաշխավորել մրցակցությունը և յուրաքանչյուրին ապահովել ազատ տնտեսական գործունեության հնարավորությամբ:

Կարևոր է պահպանել մասնավոր և հանրային տնտեսությունների միջև խելամուտ հավասարակշռություն: Պետությունն իր կանոնակարգման գործառնայթի հետ մեկտեղ շուկայական տնտեսության մեջ ունի սահմանափակ դեր: Պետությունը կարող է իր կարգավորող դերով կամ գործունեությամբ միջամտել տնտեսական գործընթացներին միայն այն ժամանակ, երբ շուկաներն այլևս չեն կարողանում առաջնորդվել ինքնակարգավորման մեխանիզմով, ինչպես օրինակ արտաքին ներգործությունների, բնական մենաշնորհների և կարտելների ի հայտ գալու արդյունքում: Շուկայական տնտեսությունում պետությունը կարող է վերաբաշխել ստեղծված եկամուտները տարբեր սոցիալական մեխանիզմների միջոցով: Այս պարագայում հնարավոր է տեղի ունենա բախում արդյունավետության ապահովման և աճի նպատակային ցուցանիշներին հասնելու միջև: Եկամտի չափապանց շատ վերաբաշխումը կամ կարգավորումը կարող են թուլացնել տնտեսությունը և շուկաների գործունակությունը: Պլանավորման քաղաքականությունը չպետք է թույլ տա, որ պետության կամ այլ խմբերի կողմից միջամտությունները խաթարեն շուկայական մեխանիզմի աշխատանքը:

### Գոյություն ունեն մի շարք ընդունված սկզբունքներ.

- Շուկայում պետք է լինի ազատ մրցակցություն, և այն պետք է պաշտպանված լինի կարտելային պայմանավորվածություններից և շուկայում գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումներից:
- Պետության միջամտությունը պետք է լինի շուկայի պահանջումներին համապատասխան, այսինքն այն չպետք է բացասաբար ազդի շուկայական մեխանիզմների վրա:
- Սոցիալական քաղաքականությունը պետք է լինի արդյունավետ:
- Սուբսիդիաները պետք է տրվեն բացառապես որպես ժամանակավոր օգնություն և ոչ որպես տնտեսական միավորների պահպանման միջոց:
- Պլանավորման քաղաքականության հիմնարար սկզբունքներն ամրագրվում են ՀՀ օրենքներում, ինչպես նաև ՀՀ-ում ամենահիմնարար սկզբունքները սահմանող փաստաթղթում սահմանադրությունում:
- Հայաստանի տնտեսության համար կարևոր իրադարձություն էր նաև 2013 թվականին Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ):



#### Առաջադրանք 4

**Կապմեք** չորս տարբեր խմբեր և պատրաստեք յուրաքանչյուր հիմնարար արժեքի վերաբերյալ կարճ ռեֆերատ, որպեսզի վերջում կարողանաք բանավիճել տնտեսական քաղաքականության հիմնարար արժեքների և դրանց միջև կապերի շուրջ:

#### 1.2.1 «Ապատություն» հիմնարար արժեք

→ Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և պատություններն ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:

#### Հոդված 42.

##### Կարծիքի արտահայտման ապատությունը

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ապատարտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ապատությունը:

Կարծիքի արտահայտման ապատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և պատությունների պաշտպանության նպատակով:

#### 1.2.2 «Արդարություն» հիմնարար արժեք

→ Անարդարությունն իր մեջ սովորաբար ներառում է անհավասարության բաղադրիչ: «Արդարություն» հիմնարար արժեքի տեսանկյունից տարբերակվում են վարքային արդարության ու ռեսուրսների արդար բաշխման գաղափարները:

Վարքային արդարությունը վերաբերում է այլոց նկատմամբ համապատասխան վարվելակերպի դրսևորմանը: Ամենակարևորն օրենքի առաջ հավասարությունն է: Վարքային արդարության սկզբունքով անձի ցուցաբերած վարքը այլոց նկատմամբ ուղղորդվում և բնորոշվում է բարոյական նորմերով:

Եթե «արդարություն» հասկացությունը դիտարկում ենք «ռեսուրսների արդար բաշխման» տեսանկյունից, ապա այս դեպքում գործ ունենք հասարակության դիրքորոշումների բարոյական նորմերի գնահատման հետ. օրինակ, ինչպե՞ս պետք է եկամուտն ու ունեցվածքը բաշխվեն մարդկանց և խմբերի միջև: Դրա հիմքում ընկած է այն փաստը, որ նույնիսկ իրավունքների հավասարության ապահովման պարագայում տնտեսական արդյունքները կարող են բաշխվել անհամաչափ:

«Արդարություն» արժեքը առանցքային դեր է կատարում նաև հարկային քաղաքականության մեջ: Տնտեսական քաղաքականությանն են առնչվում տարբեր խմբերի միջև փոխհարաբերությունները՝ օրինակ, գործատուների և աշխատողների, տարբեր երկրների (օրինակ՝ վարգացող և վարգացած) ու տարբեր սերունդների (օրինակ՝ տարբեր սերունդներ ունեն տարբեր հայացքներ չվերականգնվող բնական ռեսուրսների սպառման վերաբերյալ) միջև:

#### 1.2.3 «Անվտանգություն» հիմնարար արժեք

→ Ոչ ոք չի կարող ունեցվածքի միջոցով իրեն պաշտպանել հիվանդության, ծերության կամ անհաջողության ռիսկերից: «Անվտանգությունը» պետք է թույլ տա ապագայի հանդեպ ունենալ դրական ակնկալիքներ, որպեսզի մարդիկ կարողանան պլանավորել ու կառուցել սեփական կյանքը:

Առանձնացվում են անհատներին վերաբերող տնտեսական ռիսկերի երեք տեսակներ.

**Անաշխատունակության ռիսկ**, որն առաջանում է հիվանդությունների, դժբախտ պատահարների, ծերության պատճառով:

**Գործազրկության ռիսկ**, որն առաջանում է կարճաժամկետ տնտեսական ճգնաժամերի պատճառով, երբ նվազում է պահանջարկը ապրանքների նկատմամբ և, հետևաբար, հնարավոր չէ ապահովել բոլոր աշխատողների պահվածությունը, կամ երկարաժամկետ կառուցվածքային ճգնաժամերի պատճառով, երբ առանձին ոլորտներ տնտեսական անկում են ապրում, իսկ տնտեսական աճը բավարար չէ այս ամենը հավասարակշռության բերելու համար: Այս ամենի հետևանքով կարող է բարձրանալ գործազրկության մակարդակը, ինչն իր հերթին կարող է բացասաբար ազդել ձեռնարկությունների արդյունավետության վրա:

**Եկամուտի և ունեցվածքի ռիսկ**, որն առաջանում է գնաճի կամ որոշ ապրանքների նվազող պահանջարկի պատճառով:

Քանի որ պետությունը չի կարող հոգ տանել բոլոր ռիսկերը նվազեցնելու մասին, գոյություն ունի մասնավոր ապահովագրության ոլորտ: Պետության կողմից ռիսկերից ապահովագրության և անհատի իր սեփական տնտեսական ապահովության նկատմամբ պատասխանատվության բաշխվածության վերաբերյալ կարծիքները տարբեր են:

#### 1.2.4 «Առաջընթաց» հիմնարար արժեք

→ Երբ խոսում ենք առաջընթացի մասին, անմիջապես պատկերացնում ենք գիտելիքի ավելացում ու դրա արդյունավետ կիրառում: Չնայած դրան՝ առաջընթացը ոչ միշտ է ճիշտ դիտարկել որպես քայլ դեպի ավելի լավ: Ներկայումս մեր կյանքը դժվար է պատկերացնել առանց Նորարարությունների լինի դա արտադրանք, թե որևէ Նոր մեթոդի մշակում: Պատմությունը, այնուամենայնիվ, ցույց է տվել, որ տեխնոլոգիական վարձացումները կարող են դառնալ վտանգավոր կամ չարաշահվել: Ավելին՝ աշխարհում գոյություն ունեցող ոչ բոլոր խնդիրներն է հնարավոր լուծել տեխնոլոգիական առաջընթացի միջոցով:

Այնուամենայնիվ՝ Նոր արտադրանքները կամ տեխնոլոգիաները խթանում են տնտեսական առաջընթացը, ինչն, իր հերթին, ստեղծում է եկամուտ ստանալու Նոր հնարավորություններ: Սակայն Նորարարությունը կարող է նաև վնասել նրանց, ում արտադրանքը, Նորերի ի հայտ գալով, դուրս է մղվել շուկայից: Արտադրական Նոր մեթոդների միջոցով ստեղծվում են Նոր մասնագիտություններ, մինչդեռ առկա մասնագիտական կարողություններն ու հին մեթոդները կարող են կորցնել իրենց արդիականությունը: Առաջընթացի այս ասպեկտն անվանում են կառուցվածքային փոփոխություն:

### Տնտեսական կարևոր հասկացություններ

**Նորարարությունը** որևէ Նոր գաղափարի (գյուտի) մուտքն է սպառման շուկա, ինչը նպաստում է որևէ արտադրանքի (արտադրական Նորարարություն) կամ արտադրական գործընթացի (գործընթացային Նորարարություն) բարելավմանը:

# ԲԱԺԻՆ 2

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ + ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ = ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



### 2.1 ՇՈՒԿԱՅԻ ՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

#### 2.1.1 Շուկայի դերն ու սահմանափակումները

➔ Ինչ, որքան և ինչպես է արտադրվում յուրաքանչյուր շուկայական տնտեսությունում որոշում է առաջին հերթին շուկայական մեխանիզմը. սա վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության տնտեսությանը:

Պետության միջամտությունն անհրաժեշտ է այն դեպքում, երբ շուկայական տնտեսության ինքնակարգավորման մեխանիզմը չի տալիս ցանկալի արդյունքներ: Շուկայական տնտեսության պայմաններում ամբողջ տնտեսությունը հանդիսանում է արտադրողների և սպառողների փոխհարաբերությունների համակարգ, որը կարգավորվում է ինքնաբերաբար, առանց որևէ մեկի թելադրանքի: Միակ թելադրողը շուկայում ձևավորված պահանջարկն է: Տնտեսագիտական գրականության մեջ փոխհարաբերությունների այս ձևը կոչվում է հորիզոնական համակարգում (կոորդինացիա) կամ ինքնակարգավորվող (ինքնաբերաբար կարգավորվող) տնտեսություն: Սա շոտլանդացի տնտեսագետ և փիլիսոփա Ադամ Սմիթի (1723-1790թթ.) հայտնի «անտեսանելի ձեռքի» տեսությունն է, համաձայն որի անհրաժեշտ է ապահովել արտադրողների լիարժեք պատասխանատվություն: Արտադրողների միջև փոխհարաբերությունները պետք է կարգավորվեն շուկայում ձևավորված պահանջարկի և դրանից բխող առաջարկի միջոցով: Ադամ Սմիթը իր աշխատություններից մեկում նշել է «անտեսանելի ձեռքի» սկզբունքի մասին, ըստ որի պատ մրցակցության պայմաններում շուկայում գործող ձեռնարկատերերը հաշվի է առնում բացառապես իր շահը, սակայն արդյունքում ավելի մեծ օգուտ է տալիս հասարակությանը, քան, եթե նախապես գործեր հանում հասարակության շահերի:

Շուկայական տնտեսական մրցակցության դեպքում ձեռնարկությունների համար առաջնահերթ խնդիր է հոգալ արտադրության գործոնների աշխատուժի, հողի և կապիտալի հնարավորինս արդյունավետ օգտագործման մասին: Նպատակը օպտիմալ տեղաբաշխմամբ ու նվազագույն ծախսով սպառողների ցանկություններին լավագույնս համապատասխանող ապրանքների արտադրությունն է: Ռեսուրսների բաշխմանն առնչվող խնդիրները կարող են լուծվել շուկայական տնտեսության մեխանիզմի միջոցով:

Այս առնչությամբ կարևոր դերակատարություն ունի հանրային բարիքի գաղափարը, որի օրինակն է մաքուր շրջակա միջավայրը: Հանրային բարիքի բաշխման քաղաքականության առանցքային գործիքներից են հարկերը, պետական նպաստները, արտոնությունների տրամադրումն ու իրավական սահմանափակումները:

**Տնտեսական կարևոր հասկացություններ**

**Բաշխումը** ռեսուրսների օգտագործումն է տարաբնույթ նպատակների համար: Ռեսուրսների ամենաարդյունավետ օգտագործումը իրականացվում է շուկայական մեխանիզմի միջոցով, քանի որ շուկայում առկա առաջարկն ու պահանջարկն են ձևավորում օպտիմալ գին:

Այդ մեխանիզմի միջոցով է որոշվում, թե՞

- ինչ պետք է արտադրվի
- ինչպե՞ս պետք է արտադրվի
- ո՞րտեղ պետք է արտադրվի

Եթե շուկայական մեխանիզմը կորցնի իր ուժը, տեղի կունենա ռեսուրսների սխալ կամ անարդյունավետ տեղաբաշխում:

ՇՈՒԿԱՅԻ ՈՒՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

### Առաջադրանք 1


**Ձևակերպե՛ք** հետևյալ երևույթները որպես արտաքին ներգործությունների հետևանքով ի հայտ եկած խնդիր:

անտառների վերացում - երթևեկությունից առաջացող աղմուկ - հողատարածքների գների չարաշահում - աշխատավարձի վերաբերյալ բանակցություններ - ավերվություն

### Առաջադրանք 2

Որո՞նք են թվարկվածներից հանրային բարիքներ:

համալսարաններ - տարրական դպրոցներ - կինոթատրոն - մաքուր շրջակա միջավայր - դպրոցական դասագրքեր



## Ի՞նչ է արտաքին ներգործությունը («էքստերնալներ»)

Ինդիվիդուալիզմը, որպես նորմ, պահանջում է, որ յուրաքանչյուր ոք կրի իր գործողություններից բխող բոլոր հետևանքների համար պատասխանատվություն: Միայն այս կերպ է հնարավոր արդյունավետ համակարգել անհատների գործողությունները շուկաներում: Հաճախ որևէ մեկի կայացրած որոշումների անցանկալի հետևանքների կրողը կարող են դառնալ չեպոք անձինք:

Նման հետևանքները կոչվում են **արտաքին ծախսեր կամ արտաքին բացասական ներգործություններ**: Նման դեպքերում պատճառվող ծախսերը ստիպված է լինում փոխհատուցել մեկ ուրիշը: Արտաքին բացասական ներգործությունները մեծագույն խնդիր են շուկայական տնտեսության համար, որի լուծումներից մեկը դրանց արգելումն է: Սակայն նման արգելքները շուկայական տնտեսությունում հապվադեպ են և հիմնականում վերաբերում են շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանը, օրինակ՝ թունավոր նյութերի արտանետմանը:

**Օրինակ** արդյունաբերական մի գործարան գետն է լցնում իր թափոնները, որի հետևանքով ձկների տեսակային կազմը նվազում է, ինչի արդյունքում ձկնորսները կարող են կորցնել իրենց եկամտի աղբյուրը:

Արտաքին ներգործությունները կարող են լինել նաև **դրական**, ինչը, սակայն, չի հանդիսանում տնտեսական քաղաքականության կարգավորման առարկա: Արտաքին դրական ներգործության օրինակ է, երբ ինչ-որ մեկը, հետապնդելով իր սեփական շահերը, միաժամանակ օգտակար է լինում նաև մեկ ուրիշին ստեղծելով հանրային օգուտ:

**Օրինակ** մեղվապահը մի այգեգործական տնտեսության մոտակայքում կբաղվում է մեղվաբուծությամբ, և այդ այգեգործական տնտեսության բույսերի արտադրողականությունը բարձրացնում է:


## Ի՞նչ է «հանրային բարիքը»

Ինչպես նշվեց, արտաքին դրական ներգործությունները որպես կանոն չեն հանդիսանում տնտեսական քաղաքականության կարգավորման առարկա, քանի որ դրանք ոչ ոքի չեն վնասում: Հետևաբար, տնտեսական քաղաքականությունը այս հարցին պետք է անդրադառնա միայն այն ժամանակ, երբ արտադրվող ապրանքը բացառապես կամ գերազանցապես ծառայում է հանրային օգուտի ստեղծմանը՝ արտադրության ծախսերը կրողին տալով միայն չնչին օգուտ: Սրա հետևանքով արտադրողը հնարավոր է դադարեցնի այդ ապրանքի մատակարարումը՝ չնայած, որ կա դրա անհրաժեշտությունը: Նմանատիպ ապրանքները կոչվում են հանրային բարիքներ: Հանրային բարիքներն աչքի են ընկնում նրանով, որ հնարավոր չէ բացառել դրանց օգտագործումը որևէ մեկի կողմից, քանի որ դրանք հասանելի են բոլորին:

**Օրինակ** ամբարտակի մոտ բնակվողն ունի հնարավորություն պաշտպանվել հեղեղաջրերից անկախ այն հանգամանքից, թե արդյոք նա դրա կառուցման մեջ ունեցել է ներդրում, թե ոչ:

Մրցակցային շուկան կազմակերպություններին չի ընձեռում մեծ շահույթներ ստանալու հնարավորություն, քանի որ մրցակցային ճնշումը նրանց ստիպում է իրենց ապրանքի գինը պահել հնարավորին ցածր՝ սահմանային ծախքի շրջանակներում: Եթե շուկայում կան քիչ թվով մատակարարներ, նրանք կարող են ներքին համաձայնության արդյունքում արհեստականորեն բարձրացնել գները: Գնի պայմանավորվածության այս ձևը կոչվում է գաղտնի պայմանավորվածություն (collusion), իսկ պայմանավորվող ձեռնարկությունների խումբը՝ կարտել: Միջազգային ամենահայտնի կարտելը՝ Նավթ արտահանող երկրների կազմակերպությունն է՝ ՕՊԵԿ-ը: Եվրոպական Միությունում կարտելային պայմանավորվածություններն արգելված են և միայն որոշակի բացառությունների դեպքում կարող են հավանության արժանանալ ԵՄ Հանձնաժողովի կողմից: Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ համաձայնությունները կարգավորվում են «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի» համապատասխան հոդվածներով:

Շուկայում միայն մեկ մատակարարի կամ սպառողի առկայությունը խոսում է մենաշնորհային տնտեսության մասին: Այս երևույթի շրջանակներում կարևոր է արձանագրել, որ մենաշնորհային դիրք ունեցողը որպես միակ մատակարար, գտնվում է մրցակցությունից դուրս և դրանով իսկ հնարավորություն է ունենում որոշելու ապրանքաշրջանառության ծավալը կամ գները:



**Տնտեսական կարևոր հասկացություններ**

Տնտեսական կյանքում բազմաթիվ որոշումներ ուղղված են նախկինում ձեռնարկված քայլերը փոփոխելուն, որպեսզի նոր ստեղծված պայմաններում հնարավոր լինի հասնել սահմանված պլաններին: Դրա համար կարևոր է իրականացնել **սահմանային վերլուծություն (marginal analysis)**, որը թույլ կտա հասկանալ ընթացիկ իրավիճակի փոփոխություններից բխող հետևանքները: Այս նպատակով անհրաժեշտ է արտադրական գործառնություններից որևէ մեկի փոփոխությունով պայմանավորված հավելյալ եկամուտը համեմատել հավելյալ ծախքերի հետ:

**Սահմանային ծախքը (marginal cost)** արտադրանքի լրացուցիչ միավորի արտադրության համար պահանջվող ընդհանուր ծախքի փոփոխությունն է, այսինքն ցույց է տալիս, թե ամեն մեկ ավել արտադրանքը որքան ծախս կբերի իր հետ: Եթե սահմանային ծախքը ավելի քիչ է, քան **սահմանային եկամուտը (marginal revenue)**, արտադրության ընդլայնումը շահույթ կբերի ձեռնարկությանը: Ձեռնարկությունը գրանցում է իր առավելագույն շահույթը, երբ սահմանային ծախքը հավասարվում է սահմանային եկամտին:

**Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենք: Հակամրցակցային համաձայնությունները, դրանց արգելումը:**  
Հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

**Ի՞նչ է ՕՊԵԿ-ը:**

**Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ, անգլ.՝ Organization of the Petroleum Exporting Countries (OPEC))** գլխամասային գրասենյակը Վիեննայում է: 1960թ. Նավթ արտադրող երկրների կողմից հիմնադրված կարտելը տարին երկու անգամ իր անդամ երկրների համար հաստատում է քվոտաների չափ՝ Նավթի համաշխարհային շուկայական գինը կայուն պահելու նպատակով: Այս պահին ՕՊԵԿ-ը ունի 15 անդամ երկիր՝ Ալժիրը, Անգոլա, Էկվադոր, Հասարակածային Գվինեա, Գաբոն, Իրան, Իրաք, Զուլեյթ, Լիբիա, Նիգերիա, Քաթար, Կոնգոյի Հանրապետություն, Սաուդյան Արաբիան, Վենեսուելա և Արաբական Միացյալ Էմիրություններ:

**Օլիգոպոլիան** մրցակցության ձև է, որի դեպքում առաջարկը շուկայում ներկայացվում է սահմանափակ

թվով ձեռնարկությունների կողմից:

**Մենաշնորհի (մոնոպոլիայի)** դեպքում շուկայում կա միայն մեկ մատակարար: Մենաշնորհատերը կարող է ապատրոեն սահմանել գներ ու ծավալ, քանի որ չունի մրցակիցներ: Մենաշնորհատերն ավելի քիչ արտադրական ծավալի դեպքում կարող է պահանջել ավելի բարձր գին, քան կատարյալ մրցակցության դեպքում շահույթը հասցնելով առավելագույնի:

**Մոնոպսոնիա**՝ շուկա, որտեղ բազմաթիվ վաճառողների կողմից մատակարարվող ապրանքի համար առկա է միակ մեկ գնորդ: Նա կարող է պահանջել արտադրական ավելի մեծ ծավալներ ու ավելի ցածր գներ, քան կատարյալ մրցակցության պարագայում:

**Տնտեսական կարևոր հասկացություններ**

**Շուկայական իշխանություն** առկա է այն դեպքում, երբ մատակարարը կամ սպառողը շուկայում իշխող դեր են ստանձնում՝ գործում են առանց մրցակցության (մենաշնորհային կարգավիճակ) կամ ի տարբերություն մյուս մրցակիցների շուկայում գերիշխող կարգավիճակ են ստանձնում:

**Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենք: Մենաշնորհ կամ գերիշխող դիրք:**

Ըստ ՀՀ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

- 1) տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռք բերող չի հանդիպում էական մրցակցության և/կամ իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և/կամ դուրս մղելու այլ տնտեսվարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և/կամ խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ
- 2) որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ
- 3) ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ
- 4) ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռք բերող չունի մրցակից:

**Առաջադրանք 3**

Տնտեսական մտածելակերպ և բանտ. **Կարդացե՛ք** հետևյալ տեքստն ու պլանավորե՛ք, թե ինչպես կգործե՛ք օլիգոպոլիայի պայմաններում՝ տվյալ այլընտրանքներից որը կընտրե՛ք: Բանտարկյալների երկընտրանքի մատրիցա:

**Տնտեսական մտածելակերպ և բանտ**

Երկու տղամարդ մեղադրվում են միասին հանցանք գործելու մեջ: Նրանք գտնվում են առանձնացված բանտախցերում և հնարավորություն չունեն միմյանց հետ հաղորդակցվելու: Նրանցից յուրաքանչյուրը կարող է կամ խոստովանել, կամ չընդունել իր մեղքը: Եթե երկու բանտարկյալներն էլ խոստովանեն, նրանց պատիժը կլինի հինգ տարվա ապատարկում: Եթե նրանցից ոչ մեկը չխոստովանի, ապա դատավորը կարող է դժվարանալ ապացույցներ ներկայացնել: Այս դեպքում հնարավոր է, որ նա երկամյա ապատարկման վճիռ կայացնի 2-ի համար էլ: Սակայն, եթե բանտարկյալներից միայն մեկը խոստովանի, ապա խոստովանողը կձերբակալվի մեկ տարով, իսկ լռողը՝ տասը տարով:

**Ստանձնե՛ք բանտարկյալների դերը. ի՞նչ կանեի՞ք դուք:**

Տնտեսական մտածելակերպ և բանտ		Ձերբակալված Բ	
		Խոստովանում է	Լռում է
Ձերբակալված Ա	Խոստովանում է	-5 (Ա); -5 (Բ)	-1; -10
	Լռում է	-10; -1	-2; -2

### 2.1.2 Տնտեսական քաղաքականության նպատակները

→ Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության նպատակները սահմանվում են ՀՀ կառավարության ծրագրով մշակվում և Ազգային ժողով է ներկայացվում կառավարության կապմավորումից հետո քաննողյա ժամկետում:

Համաձայն 2019թ. կառավարության ծրագրի ՀՀ տնտեսական քաղաքականության նպատակներ են՝

- Տնտեսական աճ,
- Աշխատատեղերի ստեղծում, աշխատավարձերի բարձրացում,
- Ստեղծվող տնտեսական արդյունքների առավել հավասարաչափ բաշխում,
- Անաչառ տնտեսական մրցակցության ապահովում,
- Աղքատության հաղթահարում,
- Օրենսդրական դաշտի բարելավվում, որը կխթանի տնտեսական գործունեությունը:

### Տնտեսական կարևոր հասկացություններ

**Տնտեսագիտության մեջ առանձնացվում են գործազրկության 3 տեսակ**

- **Ֆրիկցիոն գործազրկություն:** Այն մարդիկ են, ովքեր ժամանակավորապես չեն աշխատում, փնտրում են աշխատանք և գտնելուն պես անցնում են աշխատանքի: Օրինակ բուս ավարտած ուսանողները կամ մարդիկ, ովքեր լքել են աշխատատեղը՝ նոր և ավելի լավ աշխատանքի անցնելու համար:
- **Կառուցվածքային գործազրկություն:** Առաջանում է տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում: Մարդիկ կորցնում են իրենց "հնացած" աշխատատեղը և ստիպված են կամ վերապատրաստվել, կամ փոխել մասնագիտությունը: Օրինակ՝ մեքենագրուհիները:
- **Ցիկլային գործազրկություն:** Առաջանում է տնտեսությունում տեղի ունեցող տնտեսական անկման արդյունքում, երբ արտադրությունները կրճատվում են և մարդիկ կորցնում են իրենց աշխատանք:

Տնտեսությունում և քաղաքականությունում պահվածությունը համարվում է **լրիվ (full employment)**, երբ աշխատանքի շուկան հավասարակշռված է, այսինքն աշխատանք փնտրողների թիվը հավասար է ազատ աշխատատեղերի քանակին: Լրիվ պահվածության դեպքում գործազրկության մակարդակը՝ գործազրկության բնական մակարդակը, հավասար է ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունների գումարին: Տնտեսությունում առկա է լրիվ պահվածություն, երբ ցիկլային գործազրկությունը հավասար է զրոյի, իսկ իրական ՀՆԱ-ն՝ տնտեսության արտադրական պոտենցիալին:

ՇՈՒԿԱՅԻ ՈՒՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

**Առաջադրանք 4**

Սլաքների օգնությամբ **դասավորեք** հետևյալ տնտեսաքաղաքական նպատակները հասարակության հիմնարար արժեքներին համապատասխան և հիմնավորեք Ձեր ընտրությունը:

Տնտեսաքաղաքական նպատակներ	Տնտեսաքաղաքական հիմնարար արժեքներ
Առաջատր տնտեսական մրցակցության ապահովում	Ազատություն
Աշխատատեղերի ստեղծում, աշխատավարձերի բարձրացում	Առաջընթաց
Աղքատության հաղթահարում	Արդարություն
Ստեղծվող տնտեսական արդյունքների առավել հավասարաչափ բաշխում	Անվտանգություն
Տնտեսական աճ	



**Տնտեսական կարևոր հասկացություններ**

**Գնային կայունությունը** չի նշանակում անփոփոխ գներ, այլ նշանակում է գների դանդաղ և կայուն աճ: Գնային կայունության հաստատման համար առանցքային է չափավոր և կանխատեսելի գնաճի ապահովումը:

**Տնտեսական աճի առանցքային դրսևորումներից է** համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը: Երկրի ՀՆԱ-ն պատկերում է տվյալ երկրում տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված ապրանքների և ծառայությունների արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և Կուտարտահանման համար:

**Երկրի վճարային հաշվեկշիռը որոշակի ժամանակահատվածում** արտասահմանից ստացված վճարային մուտքերի հարաբերակցությունն է նույն ժամանակահատվածում դեպի արտասահման գնացած վճարային ելքերին:

**Ի՞նչ է «առաջնահերթությունների բախումը»**

**Առաջնահերթությունների բախումն** առաջանում է երբ, օրինակ, պետությունը փորձում է միաժամանակ պայքարել բարձր գնաճի (միտված գների կայունության պահպանմանը) ու բարձր գործազրկության (նպատակ ունենալով հասնել կրթականության բարձր մակարդակի ապահովմանը) դեմ: Նման իրավիճակում երկրները հետևյալն է. Կենտրոնական Բանկը կարող է բարձրացնել տոկոսադրույքները՝ վարկերի պահանջարկը նվազեցնելու համար, ինչը կհանգեցնի շրջանառվող փողի ծավալի կրճատմանը և գնաճի կանխմանը:

Այդպիսով՝ սպառողներն ու ձեռնարկատերերը կսկսեն վերցնել ավելի քիչ վարկեր, և մարդիկ ծախսելու համար իրենց տրամադրության տակ կունենան ավելի քիչ փող: Սա իր հերթին կարող է հանգեցնել ձեռնարկությունների շրջանառության նվազման, իսկ վատագույն դեպքում գործազրկության մակարդակի բարձրացման: Այսպիսով՝ գնային կայունությունը կարող է մի որոշ ընթացք ուղեկցվել ավելի բարձր գործազրկությամբ:



### 2.1.3 Տնտեսական քաղաքականության գործիքները

→ **Տնտեսաքաղաքական գործիքները տարանջատվում են ըստ պետական միջամտության անհրաժեշտության աստիճանի:**

→ Պետությունը կարող է **տեղեկատվության** միջոցով ազդեցություն գործել տնտեսվարողների վարքի վրա: Այն տեղեկությունը, որը վերաբերում է պետության կողմից որդեգրած քաղաքականությանը, կոչվում է ծրագրային: Եթե տեղեկատվությունը ծառայում է ներկայիս տնտեսական վիճակի լուսաբանմանը, ապա խոսքը իրավիճակային տեղեկատվության մասին է: Նմանատիպ տեղեկատվության օրինակներ են հանդիսանում կառավարության տնտեսական պարզացման ծրագրերը, ամփոփիչ պեկոյցները և վիճակագրական տվյալների մասին հրապարակումները:

→ Պետությունը **տեղեկատվությունը** կարող է կիրառել նաև որպես տնտեսության մասնավոր սուբյեկտների որոշումների և քայլերի վրա ազդեցություն ունենալու գործիք, սակայն կարևոր է չհատել մանիպուլյացիայի սահմանը:

→ Շատ ավելի ինտենսիվ են **շուկայական գործընթացներին** ուղղված այն միջամտությունները, որոնք ազդեցություն են ունենում շուկայական գների ու պայմանների վրա, ինչպես, օրինակ մաքսային դաշտի կարգավորումները, պետական սուբսիդիաները: Շուկայական գործընթացների վրա ազդում է նաև Կենտրոնական Բանկի վարած դրամավարկային քաղաքականությունը՝ կապված տոկոսադրույքերի միջոցով շուկայական պահանջարկի, հետևաբար շուկայական գների փոփոխման հետ:

→ Ընթացիկ տնտեսական գործընթացներում առանցքային դեր ունեն **ինստիտուցիոնալ փոփոխությունները**: Դրանցից են, օրինակ, սեփականության իրավունքների կարգավորումն ու պայմանագրային իրավունքը, մրցակցային իրավունքը և մասնագիտական գործունեություն ծավալելուն առնչվող օրենսդրական կանոնակարգումը:

→ Ամենաինտենսիվ միջամտությունը **պետական հարկադրանքն է**: Այն բախվում է «ապատություն» հիմնարար արժեքի հետ, քանի որ դրանով կարող են սահմանափակվել նպատակներ սահմանելու և դրանք իրագործելու հնարավորությունները: Հարկադրանքի բոլոր միջոցառումները բնորոշվում են վարչական մեծ ծախսերով և հաճախ չեն ունենում նախատեսված ազդեցությունը, քանի որ դրանց ի պատասխան դրսևորվում է խուսափողական ռազմավարություն: Սակայն առանձին դեպքերում և բավարար հիմնավորումների պարագայում «ապատություն» արժեքի պահպանմանն ուղղված հարկադրանքը կարող է ծառայել համընդհանուր բարօրությանը:

Այնուամենայնիվ, պետության գործառույթը չի սահմանափակվում միայն տնտեսական դերակատարների վարքի վրա ազդելով: Օրինակ՝ հարկերի և սոցիալական վճարների միջոցով պետությունը կարող է նաև անմիջականորեն ազդել պետական եկամուտների և շուկայական պահանջարկի վրա: Պետական անմիջական կանոնակարգման օրինակ է էներգետիկայի ոլորտում գների վերահսկողության հաստատումը:

Տնտեսաքաղաքական գործիքների ազդեցությունն, այնուամենայնիվ, հնարավոր չէ հստակ կանխատեսել, քանի որ դա որոշակիորեն կախված է հասարակության և տնտեսվարող սուբյեկտների արձագանքից:

#### Առաջադրանք 5

Դասարանում **քննարկեք**, թե ներկայացված միջոցառումները տնտեսաքաղաքական որ գործիքին են համապատասխանում:

**Եկամտային հարկի դրույքաչափի փոփոխություն - խնայողության կոչ - Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի փոփոխություն -արտահանման վարկերի համար տոկոսների սուբսիդավորում պետության կողմից**

## 2.2 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

→ Տնտեսական քաղաքականության կարևորագույն դերակատարները **Կառավարությունը, Կենտրոնական Բանկն ու Ազգային Ժողովն են**: Ժամանակակից տնտեսական քաղաքականության համար գնալով ավելի նշանակալից դեր են սկսում խաղալ նաև միջպաշտպան կառույցներն ու միությունները, ինչպես, օրինակ, **Եվրասիական Տնտեսական Միությունը (ԵԱՏՄ) կամ Եվրամիությունը (ԵՄ)**:

## 2.3 ՏՆՏԵՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

### 2.3.1 Պետական միջամտությունը տնտեսությանը

→ **Հիմնականում տարբերակում են պետական միջամտության երկու տեսակներ՝ կանոնակարգող և գործընթացային: Կանոնակարգող քաղաքականության նպատակն է տնտեսական կարգի («խաղի կանոնների») ձևավորումը: Գործընթացային քաղաքականությունը, ընդհակառակը, ենթադրում է, որ պետությունը ոչ միայն հաստատում է կանոնները, այլ առանձին դեպքերում միջամտում է տնտեսական գործընթացներին:**

Ի տարբերություն երկարաժամկետ պլանավորվող կանոնակարգող քաղաքականության գործընթացային քաղաքականությունը կարճաժամկետ է: Այդուհանդերձ, ավելի նպատակահարմար կլինի դրանք դիտարկել կապակցվածության մեջ: Կանոնակարգող քաղաքականությունը հիմնական որոշումներ է կայացնում տնտեսական համակարգի վերաբերյալ (օրինակ՝ կենտրոնական կառավարման կամ ավատ մրցակցության օգտին): Գործընթացային քաղաքականությունը կառուցվում է դրա հիմքի վրա ստանձնելով կառավարման կարճաժամկետ գործառույթներ:

Գործընթացային քաղաքականության նկատմամբ թերահավատ մոտեցում ունեցողները համոզված են, որ շուկայական տնտեսությունը լրիվ պահպանության դեպքում կարող է ինքնուրույն հասնել կայուն հավասարակշռության, և դեմ են պետության անմիջական միջամտությանը տնտեսական գործընթացներին, քանի որ նրանց կարծիքով պետության նմանօրինակ քաղաքականությունն ապակայունացնում է տնտեսությունը:

Կանոնակարգող քաղաքականության առավելությունն այն է, որ պետությունը պետք է սահմանի գործունեության ընդհանուր «չրջանակներ» առանց ուղղակիորեն միջամտելու տնտեսական գործընթացներին: Սակայն տնտեսական քաղաքականության շատ փորձագետներ կարծում են, որ գործընթացային քաղաքականության գործիքների կիրառմամբ կարելի է խուսափել տնտեսական ձգնաժամերից կամ գոնե մեղմացնել դրանց հետևանքները:

Սովորաբար քաղաքական համակարգերի հիմքում ընկած է լինում տարբեր և երբեմն նաև հակասական գործիքակազմերի միասնական կիրառում:

Ի տարբերություն կանոնակարգող քաղաքականության գործիքների՝ գործընթացային քաղաքականության միջոցով կանոնակարգումները տեղի են ունենում շատ ավելի հաճախակի: Նրանք անմիջականորեն փոփոխում են տնտեսական գործընթացները՝ ներդնելով գործիքներ, որոնց ապդեցությունը կարելի է գնահատել համապատասխան վիճակագրական տրվյալների վերլուծությամբ: Գործընթացային քաղաքականության գործիքներից են պետական ծախսերը, հարկերի դրույքաչափերը, պետական նպաստները և Կենտրոնական Բանկի սահմանաձև տոկոսադրույքները:

Տնտեսական համակարգերի դասակարգում		
Հիմնական տարբերակիչ տարրեր	Պլանային տնտեսություն	Շուկայական տնտեսություն
Տնտեսական միավորների համակարգում	Կենտրոնացված կառավարվող տնտեսություն և պետական կառավարում	Ինքնակարգավորվող տնտեսություն և մրցակցային ավատության կառավարում
Տնտեսական միավորների ենթակայությունը պետությանը	Պլանային ծրագրեր	Արգելքներ, պետական կանոնակարգում
Սեփականություն	Պետական սեփականություն («սոցիալիզմ»)	Մասնավոր սեփականություն
Քաղաքական կարգ	Բռնապետություն	Ժողովրդավարություն

Աղբյուր՝ Pollert, Achim/ Kirchner, Bernd/ Polzin, Javier Morato: Das Lexikon der Mirtschaft. Grundlegendes Wissen von A bis Z. 2. Augl., Mannheim 2004

### 2.3.2 Մրցակցային քաղաքականություն

➔ **Քանի որ շուկայական տնտեսության կայացումը կամ տապալումը պայմանավորված է մրցակցությամբ, պետության խնդիրն է ապահովել ազատ մրցակցություն: Մրցակցությունը «արդարություն» հիմնարար արժեքի դրսևորումներից է, քանի որ դրա նպատակն է ապահովել հնարավորությունների համաչափ բաշխում: Առանց մրցակցության շուկայական մեխանիզմը չի կարող աշխատել:**

Շուկայական մեխանիզմի աշխատանքը երաշխավորելուց բացի մրցակցությունն ունի նաև այլ գործառույթներ: Շուկայական մեխանիզմի անփոփոխ գործառույթներից են եկամտի արդյունավետ բաշխման գործառույթը՝ հաշվի առնելով վերջինիս տղությունը: Դինամիկ գործառույթներից են ապրանքների արտադրության ծավալների համապատասխանեցումը պահանջարկի փոփոխություններին, ինչպես նաև ապրանքի և արտադրության գործընթացի մշտական արդիականացումը ու դրանով պայմանավորված տեխնիկական առաջընթացի ապահովումը մրցակցության շնորհիվ:

Հայաստանի Հանրապետությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում պետության տարածքում ձեռնարկությունների միջև մրցակցության ծավալման և ներքին ու արտաքին շուկաներում անբարեխիղճ մրցակցությունը և մենաշնորհը կանխելու համար: Ձեռնարկությունների անբարեխիղճ մրցակցությունը դադարեցնելու համար դրանց նկատմամբ կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության

հակամենաշնորհային օրենսդրությամբ նախատեսված կարգով և պայմաններով սահմանված տուգանքներ, դրամական տույժեր, ձեռնարկության հարկադիր մասնատում, ինչպես նաև դրանց պայմանագրերի մեջ կարող են մտցվել պարտադիր պայմաններ և այլ պատժամիջոցներ: Հակամրցակցային համաձայնություն կնքելու համար նշանակվող տուգանքի չափը կապում է հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն ՀՀ դրամ: Նման համաձայնություն կնքելու միջոցով գների չիմնավորված բարձրացման հետևանքով տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) ենթակա է գանձման դեպի պետական բյուջե: Հակամրցակցային չեն համարվում տնտեսվարող սուբյեկտների այն համաձայնությունները, որոնք ուղղված են նրանց մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը, տեխնիկական կամ տնտեսական առաջընթացին, արտադրության խթանմանը, ապրանքների կատարելագործմանը, ապրանքների արտահանման խթանմանը, նպաստում են սպառողների շահերին:<sup>1</sup>

#### Առաջադրանք 6՝

**Դասավորեք** հետևյալ տնտեսա քաղաքական գործառույթներն ըստ կանոնակարգող կամ գործընթացային քաղաքականության:

1. Գնային քաղաքականություն
2. Մասնագիտության ազատ ընտրություն
3. Եկամտային հարկի իջեցում
4. Պայմանագրի ազատության երաշխիք
5. Մաքսատուրքի բարձրացում

<sup>1</sup> Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենք:

## Որո՞նք են «դինամիկ մրցակցային գործառույթները»

**Հարմարվողականության (ադապտացիայի) գործառույթը** երաշխավորում է միայն սպառողների կողմից պահանջարկ ունեցող ապրանքների արտադրությունը: Եթե սպառողների ճաշակը, այսինքն՝ նրանց նախընտրությունները, փոխվում են, ապա, հաշվի առնելով մրցակցությունը, արտադրողները ստիպված են հարմարվել շուկայի նոր պահանջմունքներին: Ընդ որում՝ այն արտադրողը, ով դանդաղ կարձագանքի փոփոխված նախընտրություններին, կարող է շատ արագ կորցնել իր շուկայական դիրքը:

Նմանօրինակ ազդեցություն ունի նաև **Նորարարական գործառույթը**: Նորարարությունը նոր գաղափարի ստեղծման ողջ գործընթացն է, որը ներառում է տվյալ գյուտի ստեղծման բոլոր փուլերը՝ ընդհուպ մինչև դրա ձևավորումը որպես շուկայական ապրանք: Եթե որևէ մատակարար մշակում և շուկայում ներկայացնում է նոր ապրանք, ապա, լինելով դրա դեմ միակներկայացուցիչը, կարող է ձեռք բերել **առաջին խաղացողի առավելություն (first mover advantage)**: Սակայն այդ առավելությունը սովորաբար կրում է ժամանակավոր բնույթ, քանի որ այլ ընկերություններ նույնպես կարող

են սկսել արտադրել տվյալ ապրանքից: Հնարավոր է նաև, որ նորարարությունը վերաբերի ոչ թե որևէ մեկ ապրանքի կամ ծառայության, այլ մի ողջ նոր ոլորտի ստեղծմանը: Այդ պարագայում նորարարության պանզավածային կիրառումը կարող է կտրուկ իջեցնել տվյալ ապրանքի կամ ծառայության գինը՝ զրկելով նորարարության հեղինակին կամ արտադրողին առաջին խաղացողի առավելությունից:


Նորարարական մրցակցության ոլորտում առանցքային նշանակություն ունի հեղինակային իրավունքների պաշտպանությունը: Այս նպատակին է ծառայում Հայաստանի Հանրապետության **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքը**:

**2.3.3 Կայունություն և աճ**

**2.3.3.1 Կայունության քաղաքականություն**

→ Կայունության քաղաքականության շրջանակներում պետության խնդիրն է հաղթահարել տնտեսական ցիկլային տատանումներն ու անհավասարակշռությունը: Տնտեսության մեջ արտադրանքի ավելցուկ (պակասուրդ) է գոյանում այն դեպքում, երբ պահանջարկը (տնային տնտեսությունների, ձեռնարկությունների, պետության կողմից) լինում է ավելի ցածր (բարձր), քան դրանց առաջարկը:

Նման տատանումները կարող են անվստահություն առաջացնել քաղաքացիների և ձեռնարկությունների շրջանում: Դրանք կարող են հանգեցնել սոցիալական անհավասարակշռության հատկապես գործազրկության (երբ առաջարկը գերազանցում է պահանջարկը) կամ գնաձի (երբ պահանջարկը գերազանցում է առաջարկը) դեպքում: Տնական տնտեսական անհավասարակշռությունը կարող է հանգեցնել պետության և սոցիալտնտեսական կարգի հանդեպ անվստահության: Այդ պատճառով պետության տնտեսական քաղաքականության նպատակն է պահպանել ընդհանուր տնտեսական հավասարակշռություն թույլ չտալով անցանկալի վարձացումներ: Չնայած դրան տնտեսական տատանումների պատճառները և պետության դերը շուկայական տնտեսությունում



**ՀՀ տնտեսական վարձացման ցուցանիշները 2011թ.-2017թ.**

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Համախառն ներքին արդյունք նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)	104.7	107.2	103.3	103.6	103.2	100.2	107.5
Զբաղվածներ, ընդհանուր (հավար մարդ)	1,175.10	1,172.80	1,163.80	1,133.50	1,072.60	1,006.20	1,011.70
Գործազրկության մակարդակ, ընդամենը (%)	18.4	17.3	16.2	17.6	18.5	18	17.8
Սպառողական գների ինդեքսը (նախորդ տարին=100)	107.7	102.6	105.8	103	103.7	98.6	101
Ներքին պարտք ՀՆԱ-ի նկատմամբ, % (դրամային)	5.8	6	6.1	6.5	7.3	10.9	11.1
Արտաքին պարտք ՀՆԱ-ի նկատմամբ, % (դրամային)	36.4	35.4	34.7	37.2	41.4	45.9	47.8

Աղբյուր՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե (https://www.armstat.am/am/)

Եթե նախկինում ենթադրվում էր, որ անհնար է միաժամանակ հասնել գնային կայունության և լիարժեք վբաղվածության ապահովման, ապա ներկայումս տնտեսագիտությունը չի բացառում այս երկու առաջնահերթությունների համատեղ իրագործումը: Ավելին տնտեսագիտական մի շարք մոդելներ ցույց են տալիս, որ գնային երկարաժամկետ կայունությունը լիարժեք վբաղվածության նախապայմանն է:

Ընդհանուր առմամբ տնտեսության վարձացումը կարող է ընթանալ հետևյալ փուլերով՝ աճ (վերելք), բում, անկում (ռեցեսիա) և ձգնաժամ (դեպրեսիա):

Շուկայական տնտեսության մեջ պետության ունեցած դերի մասին քննարկումներն էապես պայմանավորված են համապատասխան շուկայատնտեսական գործընթացների վերաբերյալ մոտեցումներով: Ըստ այդմ անհրաժեշտություն է առաջանում գործընթացային կամ կանոնակարգող քաղաքականության կիրառման:

→ **Պահանջարկով պայմանավորված կայունության քաղաքականության հայեցակարգը մշակել է անգլիացի տընտեսագետ Ջոն Մեյնարդ Բեյնսը**



Ըստ Բեյնսի տեսության՝ տնտեսության մեջ ամբողջական պահանջարկը խաղում է որոշիչ դեր: Տեսականորեն այն հակադրվում է շուկայական տնտեսության գաղափարախոսությանը՝ պնդելով, որ լրիվ պաղվածության դեպքում չի կարող ձևավորվել ընդհանուր տնտեսական հավասարակշռություն: Ըստ Բեյնսի՝ տնտեսության մասնավոր դերակատարների բացասական ակնկալիքները կարող են սահմանափակել դրանց արտադրանքի հանդեպ պահանջարկը, ինչի արդյունքում կնվազի նաև աշխատուժի պահանջարկը՝ հանգեցնելով գործազրկության: Բեյնսի տեսությունը որպես լուծում է առաջարկում պետության ուղղակի միջամտությունը՝ հարկաբյուջետային քաղաքականության միջոցով միտված արտադրական ներուժի հավասարաչափ բաշխվածության ապահովմանը: Բեյնսականության գործընթացային քաղաքականությունը ենթադրում է, որ անկման (ռեցեսիայի) ժամանակ պետությունը պիտի խթանի պահանջարկը՝ ֆինանսավորելով այն բյուջետային դեֆիցիտի միջոցով (deficit spending): Իսկ տնտեսական բումի ժամանակ պետությունը պետք է վարի պետական ծախսերի կրճատման քաղաքականություն: Քանի որ հարկաբյուջետային/ֆիսկալ քաղաքականության պատասխանատուն կառավարությունն է, նրան է բաժին ընկնում նաև ճգնաժամերի դեմ պայքարի որոշիչ դերը:

Գործնականում դժվար է տնտեսական աճի ժամանակ պետական ծախսերի կրճատմամբ հասնել տնտեսական կայունության վերականգնմանը, այդ իսկ պատճառով պետությունները սովորաբար շարունակում են ծախսել և գոյացնել ավելի ու ավելի շատ պարտքեր:




→ **Առաջարկով պայմանավորված կայունության քաղաքականությունը հիմնվում է ամերիկացի տնտեսագետ Միլտոն Ֆրիդմանի մոնետարիստական տեսության վրա:**

Ֆրիդմանի մոնետարիստական տեսության հիմքում ընկած է շրջանառության մեջ դրվող փողի ծավալների փոփոխման միջոցով շուկաների ինքնակարգավորման հասնելու գաղափարը, որը առաջ էր բերվել դեռ Ադամ Սմիթի ժամանակաշրջանում: Ըստ մոնետարիստների՝ պետության դրամավարկային քաղաքականությունը կարող է հանգեցնել տնտեսության մեջ մասնավոր ներդրումների նվազեցմանը, ինչն իր հերթին կարող է խոչընդոտել համընդհանուր առաջարկի ընդլայնմանը (հայտնի է որպես մասնավոր ներդրումների արտամղման էֆեկտ): Ըստ այդմ, մոնետարիստիկ հետևորդների կարծիքով տնտեսության կայունության համար առավել կարևոր դեր է խաղում շրջանառվող փողի ծավալը և դրամավարկային քաղաքականությունը և ոչ հարկաբյուջետային/ֆիսկալ քաղաքականությունը:



Ֆինանսական անձնագիր ավագ դպրոցի համար



2.3.3.2 Աճ և շրջակա միջավայր

➔ **Աճի քաղաքականությունը նպատակ ունի հասնել ապրանքների և ծառայությունների մատակարարման երկարաժամկետում բարելավմանը, ինչն իր հերթին կախված է տնտեսության արտադրական հնարավորությունների ծավալից ու կառուցվածքից: Մինչդեռ կայունության պահպանմանն ուղղված քաղաքականությունը նպատակ ունի մոտեցնել տնտեսությունը իր ներուժային մակարդակին, աճի քաղաքականության երկարաժամկետ նպատակն է արտադրական ներուժի բարձրացումը:**

Աճի քաղաքականության նպատակներից է շուկաներում արտադրության գործոնների արդյունավետ բաշխումը, ինչի համար կարևոր են դեպի շուկա անխոչընդոտ մուտքի ու ելքի և մրցակցության ապահովումը, առևտրով կապվելու և պայմանագրեր կնքելու ավատությունը, ինչպես նաև հակամրցակցային դրսևորումների դեմ պայքարը: Շուկայում առկա մրցակցության մակարդակը տնտեսական աճի երկարաժամկետ որոշիչներից է:

Գործնականում կանոնակարգող քաղաքականության միջոցներին ավելանում են գործընթացային քաղաքականության բավմաթիվ գործիքներ կապված արտադրության գործոնների քանակի ու որակի հետ: Օրինակ հարկային դրույքաչափերի փոփոխման միջոցով հնարավոր է բարձրացնել մարդկանց

աշխատելու պատրաստակամությունը և խրախուսել միջազգային որակավորված աշխատուժի ներհոսքը: Հարկային արտոնությունները կարող են բարձրացնել խնայելու պատրաստակամությունը և դրանով իսկ նպաստել կապիտալի կուտակմանը:

Վերջին տարիներին հասարակության համար էական է ոչ միայն բուն տնտեսական աճը, այլ նաև այդ աճի հիմքում ընկած նախապայմանները, օրինակ բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ապահովումը: Այդ պատճառով գնալով ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում բնակչության մասնագիտական որակավորումն ու գիտական հետապոտությունների պետական աջակցությունն այդ ոլորտում: Տնտեսական աճին միտված քաղաքականությունը պետք է հաշվի առնի շրջակա միջավայրի երկարաժամկետ պահպանման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Շրջակա միջավայրը հանրային բարիք է և կարող է ունենալ արտաքին դրական ներգործություններ տնտեսության վրա, ինչի պատճառով էլ պետության գործընթացային քաղաքականության գործիքավորում վերջերս էլ ավելի մեծ տեղ է գրավում բնապահպանական միջոցառումների ձեռնարկումը: Այն ներառում է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ստանդարտների մշակում, ինչպես նաև ընդունված նորմերի խախտման պարագայում նախատեսված տույժերի և տուգանքների սահմանում:

## Որո՞նք են շրջակա միջավայրի պահպանման ստանդարտները

**Շրջակա միջավայրի պահպանման ստանդարտները** սահմանում են թույլատրելի ծավալներ արտանետումների համար: Ընդունված նորմատիվների վերին սահմանի խախտման դեպքում պետությունը իրավապարտ է կիրառության դնել քրեաիրավական պատժիչ միջոցներ, օրինակ՝ դրամական տուգանքներ:

Այս մոտեցման քննադատները կարծում են, որ այդպիսով պետությունը «թույլտվություն» է տալիս որոշակիորեն աղտոտել շրջակա միջավայրը, քանի որ ձեռնարկությունները չունեն որևէ խթան գործելու սահմանված ստանդարտներից ցածր: Այդ պատճառով պետությունը մշտապես խստացնում է շրջակա միջավայրին վերաբերող ստանդարտները և դժվարանում է որոշել այն օպտիմալ սահմանը, որին կկարողանան համապատասխանել ձեռնարկությունները՝ մինևույն ժամանակ չխոչընդոտելով ձեռնարկատիրական գործունեության առաջխաղացմանը:

Ձեռնարկություններն իրենց հերթին չեն տեղեկացնում բնապահպանական ստանդարտներին համապատասխանելու իրենց հնարավորությունների մասին, քանի որ նրանք չունեն բավականաչափ խթան նման համագործակցության համար: Մինևույն ժամանակ տարբեր ձեռնարկություններ կարող են համապատասխանել տարբեր ստանդարտների:

Մեկ այլ մոտեցում է սահմանել վնասակար նյութերի արտանետման ծավալներին համապատասխան տուրքեր: Այնուամենայնիվ, եթե սահմանված դրույքաչափերը ցածր են, հնարավոր է՝ ձեռնարկությունները սահմանափակվեն միայն այդ տուրքերի վճարմամբ և խուսափեն բնապահպանությանն ուղղված այլ քայլերի ձեռնարկումից, իսկ տուրքերի չափազանց բարձր դրույքաչափերի պարագայում կարող է տուժել տնտեսությունը:

### 2.3.4 Արտաքին առևտուր և արժույթ

**→ Արտաքին և ներքին առևտրի կանոնակարգման քաղաքականության պայմանները պետք է համապատասխանեն միմյանց:**

Արտաքին տնտեսական քաղաքականությունը պետք է համահունչ լինի ներքին տնտեսության վարման սկզբունքներին: Կարևոր է փաստել, որ կապիտալի ներդրման և ծառայությունների մատուցման միջազգային գործարքները դուրս են գործընթացային քաղաքականության շրջանակներից: Սակայն պետությունները հաճախ ունենում են շատ տարբեր տնտեսաքաղաքական նպատակադրումներ և գործնականում ընդունված է կիրառել կանոնակարգող ամենատարբեր գործիքների խումբ նաև այս ոլորտում: Սովորաբար ձեռնարկություններն իրենք են որոշում արդյոք ուզում են միջազգային շուկայից ներկրել կամ արտահանել որևիցե ապրանք: Սակայն պետության գործառույթն է մաքսատուրքերի և քվոտաների միջոցով ներկրման և արտահանման ծավալների կարգավորումը, ինչպես նաև տեխնիկական և վարչաիրավական դրույթների սահմանումը:

Միջազգային առևտրի և համաշխարհային շուկայական տնտեսության կայացման հիմքում ընկած է տարադրամների փոխանակելիության գաղափարը, որը ենթադրում է միջազգային վճարային միջոցները տեղական արժույթի փոխանակելու հնարավորություն: Առանցքային է նաև կապիտալի ազատ շարժի ապահովումը, որի շնորհիվ կապիտալը պետք է ուղղվի դեպի ամենաբարձր շահութաբերություն ունեցող ոլորտներ և շուկաներ: Տեսականորեն փոխարժեքի ձևավորումը տեղի է ունենում շուկայական առաջարկի և պահանջարկի պայմանների թելադրմամբ, սակայն կենտրոնական բանկերի՝ արժույթների վաճառքի և գնումների վերաբերյալ վարած քաղաքականությունը կարող է խաղալ վճռորոշ դեր:

Այսպիսով՝ թե՛ արտաքին առևտրի, թե՛ արժույթային քաղաքականության մեջ պետական միջամտությունը հաճախ անխուսափելի է: Ընդ որում, գնալով ավելի է կարևորվում նաև միջազգային կապակերպությունների դերը որպես քննարկումների հարթակներ: Դրանց թվին են պատկանում Արժույթի Միջազգային Հիմնադրամը (ԱՀՀ, անգլերեն՝ IMF) և Առևտրի Համաշխարհային Կապակերպությունը (ԱՀԿ, անգլերեն՝ WTO):

**Տնտեսական կարևոր հասկացություններ**

**Մաքսատուրքերը մաքսային սահմանով** ապրանքների տեղափոխման հետ կապված՝ մաքսային մարմինների կողմից գանձվող պարտադիր վճարներն են:

**Քվոտա** է համարվում ներմուծման կամ արտահանման քանակական սահմանափակումը:



# ԲԱԺԻՆ 3<sup>1</sup>

## ՈՐՆ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» ԲԱՂԱԴՐԻՉԸ



### 3.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետության ներքին քաղաքականության բաղկացուցիչ մաս, որն արտահայտված է նրա սոցիալական ծրագրերում, պրակտիկայում և հասարակության մեջ հարաբերություններ է իրականացնում հոգուտ բնակչության հիմնական սոցիալական խմբերի: Օ. Հեֆֆեն ասել է. "Եթե մարդկային հանրությունը կամենում է ունենալ օրինական բնույթ, ապա պարտավոր է առաջին ունենալ իրավական բնույթ, երկրորդ՝ իրավունքը պետք է ձեռք բերի արդարության որակ, երրորդ՝ արդարացի իրավունքը պետք է պաշտպանվի հասարակական իրավակարգով, այսինքն՝ ընդունի արդար պետության տեսք":

Սոցիալական քաղաքականությունը ժամանակակից յուրաքանչյուր պետության մեջ պարտադիր կարգով առկա է: Ավելին, թեև "սոցիալական պետություն" տերմինն ամենից հաճախ գործածվում է Եվրոպական այնպիսի պետությունների վերաբերյալ, ինչպիսին են Շվեդիան, Գերմանիան, Դանիան և այլն, կարելի է առանց չափազանցության ասել, որ ցանկացած ժամանակակից պետություն իր մեջ կրում է սոցիալականի այս կամ այն հատկանիշները: Նույնիսկ այնտեղ, որտեղ սոցիալ-տնտեսական ավատականությունը խոր արմատներ ունի, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում, տարվում է նպատակաուղղված պետական սոցիալական քաղաքականություն:

Սոցիալական քաղաքականությունն իրենից ներկայացնում է կառույցների, հասարակական կազմակերպությունների, պետական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև արտադրական կոլեկտիվների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ,

<sup>1</sup> Ադլբյորն Կենսաթոշակային համակարգերի իրավեկան կենտրոն ([www.epension.am](http://www.epension.am)):

որոնք ուղղված են հասարակական բարեկեցության բարձրացմանը, ժողովրդի կյանքի որակի բարելավմանը և սոցիալ-քաղաքական կայունությանը, հասարակության մեջ սոցիալական գործընկերության ապահովման հետ կապված սոցիալական նպատակներին և արդյունքներին հասնելուն:

#### 3.1.1 Սոցիալական քաղաքականության նպատակները

➔ Սոցիալական քաղաքականության հիմնական նպատակն է ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական նախադրյալների ստեղծում քաղաքացիների, զանազան հասարակական շերտերի և խմբերի կողմից իրենց պահանջ-մունքներն ու շահերն իրացնելու, ակտիվություն դրսևորելու և անհատականությունը բացահայտելու համար:

Չնայած հայտնի է, որ սոցիալական քաղաքականությունը գործունեության ծախսատար և թանկ տեսակ է, և սոցիալական վարձացման ուղղություններից յուրաքանչյուրը պահանջում է ֆինանսական մեծ ներդրումներ, և որքան ծավալուն է սոցիալական քաղաքականությունը, և որքան ավելի նշանակալի նպատակներ է իր առջև դնում, այնքան ավելի շատ միջոցներ պետք է հատկացվեն դրանց իրականացման համար, սակայն, վերջին հաշվով, սոցիալական քաղաքականության մեջ կատարված ներդրումները հասարակական հարստության առավել արդյունավետ ներդրումներն են:

#### 3.1.2 Սոցիալական քաղաքականության սկզբունքները

➔ Սոցիալական քաղաքականությունը կառուցված է անհատական սոցիալական պատասխանատվության, սոցիալական համերաշխության և սոցիալական գործընկերության, սոցիալական փոխհատուցման և սոցիալական երաշխիքների սկզբունքների վրա:

**Անհատական սոցիալական պատասխանատվության սկզբունքը:** Պետական պատերճալիքի և համակողմանի խնամակալության բազմամյա գոյությունը, որ յուրահատուկ է ավանդական հասարակությանը, հանգեցրեց նրան, որ որոշ անհատներ պասիվորեն սպասում են պետության աջակցությանը

Ֆինանսական անձնագիր ավագ դպրոցի համար



չխորհելով իրենց ճակատագիրը տնօրինելու և ծագող դժվար իրավիճակների հաղթահարման մեջ սեփական ավանդի մասին: Նույնիսկ այն դեպքերում, երբ անհատները կամ ընտանիքները կարող են ինքնուրույն լուծել իրենց հիմնախնդիրները կամ նվազեցնել դրանց լարվածությունը, նրանք ոչ մի ջանք չեն գործադրում:

Սակայն կան զգալի թվով մարդիկ, որոնք անհատական սոցիալական պատասխանատվության ընդունակ չեն իրենց ֆիզիկական, հոգեկան կամ մտավոր շեղումների, տարիքային կամ այլ հատկությունների պատճառով: Ուստի անհրաժեշտ է կիրառել օգնությունը պետք է հանգեցվի միայն ինքնօգնության, և պետությունը կարող է թոթափել իր որոշ քաղաքացիներին աջակցելու պարտականությունը: Նույնիսկ բարոյահոգեբանական կառույցների և ինքնաապահովման, ինքնօգնության, խմբային և հարևանական փոխհարաբերությունների տեխնոլոգիաների առավելագույն կարգազման դեպքում միշտ կլինեն անհատներ և ընտանիքներ, որոնք չեն կարող գոյատևել առանց պետության հետևողական սոցիալական աջակցության: Այնուամենայնիվ, պետք է կազմակերպչական ու դաստիարակչական լայնածավալ գործունեություն իրականացվի, որպեսզի մարդկանց հոգեբանության մեջ ձևավորվի կայուն ուղղվածություն դեպի անհատական սոցիալական պատասխանատվությունը և դրա իրականացման համար ստեղծվեն իրավական, տնտեսական, կազմակերպչական պայմաններ:

**Սոցիալական համերաշխության սկզբունքը:** Ժամանակակից հասարակությունը կոչված է սոցիալական դժվարությանը դիմակայել որպես միասնական համակարգ, որի ներսում տեղի է ունենում առավել ուժեղներից պակաս ուժեղներին ունեցվածքի վերաբաշխում: Իհարկե, առաջին հերթին այդ մեխանիզմը դրամական միջոցների վերաբաշխում է հարկերի և նպաստների համակարգի միջոցով: Սակայն այդ գործընթացը կարելի է դիտարկել նաև որպես սոցիալական ռեսուրսների վերաբաշխում սոցիալական կոմունիկացիաների, մշակույթի, առողջության, կրթության և իրավունքի: Եթե յուրաքանչյուր անհատ պիտի օգտվի միայն այն սոցիալական ռեսուրսներից, որոնք հասանելի են իր ֆիզիկական կամ մտավոր լիարժեքության, առողջական վիճակի, բարենպաստ ֆիզիկական դրության, չծանրաբեռնող խնամակալության սահմաններում, ապա դա նշանակում է, որ կսահմանափակվեն բնակչության բավականին զգալի մասի սոցիալական իրավունքները: Դա ոչ թե հարվածում է ժամանակակից հասարակական գիտակցության ժողովրդավարական կառույցին, այլև սոցիալական անվտանգության մշտական սպառնալիք է հանդիսանում: Սոցիալական բարիքների հավասար և արդարացի բաշխումը սոցիալական անկայունության և քրեական ակտիվության առավել գործուն և պրագմատիկ կանխարգելումն է:

**Սոցիալական գործընկերության սկզբունքը:** Աշխատանքի միջազգային կազմակերպության, որը ստեղծվել է 1919թ. (այժմ՝ ՄԱԿ-ի մասնագիտացված մարմին), փաստաթղթերում մշակվել են սոցիալական գործընկերության ընդհանուր սկզբունքները.

- կողմերի հավասարություն բնակցություններ վարելիս և որոշումներ կայացնելիս,
- բոլոր կողմերի համար պայմանավորվածությունները կատարելու հավասար պարտավորություն,
- կողմերի պարտադիր և հավասար պատասխանատվություն ստանձնած պարտավորությունները կատարելու համար,
- եռակողմության սկզբունքը, այսինքն՝ երեք կողմերի՝ պետական իշխանության, գործատուների և աշխատողների բնակցություններին մասնակցություն:

**Սոցիալական փոխհատուցման սկզբունքը** կոչված է ապահովել քաղաքացիների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը, որն անհրաժեշտ է նրանց սոցիալական կարգավիճակով պայմանավորված սահմանափակումները լրացնելու համար: Այն ենթադրում է կենսագործունեության մատչելի ոլորտի ստեղծում, որոշակի արտոնությունների և համապատասխան սոցիալական սպասարկման տրամադրում:

**Սոցիալական երաշխիքների սկզբունքը** նախատեսում է քաղաքացիներին տրամադրել պետության կողմից երաշխավորված սոցիալական ծառայությունների նվազագույնը ուսուցում, դաստիարակություն, հոգևոր ու ֆիզիկական վարգացում, մասնագիտական պատրաստվածություն և աշխատանքի արդյունավետ տեղավորում: Սրանց ծավալը, տեսակները և որակը պետք է ապահովեն անձի անհրաժեշտ վարգացումը և ինքնուրույն կյանքին պատրաստվելը: Այդ սկզբունքը նախատեսում է սոցիալական քաղաքականության իրականացման հնարավորությունների և նպատակների հավասարակշռություն:

### 3.2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր սոցիալական պետության համար առաջնահերթ խնդիր պետք է լինի սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ աշխատանքի ապահովումը: Սոցիալական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության գերակայություններից է: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակն է բնակչության հնարավորություններն ընդլայնել՝ որոշակի ռիսկերի դիմակայելու կամ որոշակի կարիքներ բավարարելու համար: Այն իրականացվում է սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության և ապահովագրության կոնկրետ և նպատակաուղղված քաղաքականությունների միջոցով, որոնք նպատակ ունեն նվազեցնել աղքատությունը, նվազեցնել անհավասարությունը, ապահովել ծեր տարիքը, ընդլայնել բնակչության խոցելի խմբերի հնարավորությունները և ապահովել նրանց որոշակի սոցիալական երաշխիքներով, ինչպես նաև բարելավել ժողովրդագրական իրավիճակը:

Սոցիալական քաղաքականության համար կարևորագույն մարտահրավերներն են.

- Կարողությունների կարգացումը,
- Պահանջվող ռեսուրսների պակասը,
- Հանրային գիտակցության բարձրացումը,
- Փոփոխությունները մտածողության մեջ:

Սոցիալական քաղաքականության մարտահրավերների լուծման հիմնական մոտեցումները 2018թ.-ին.

- Իրականացնել նոր ծրագրեր՝ ուղղված սոցիալ-դեմոգրաֆիական իրավիճակի բարելավմանը և աջակցմանը,
- Ջբաղվածության ոլորտում նոր ծրագրերի իրականացում, գործող ծրագրերի բարելավում, աշխատաշուկայի էլեկտրոնային հարթակի ստեղծում,
- Շարունակել փոխադրել գիշերօթիկ հաստատությունները երեխայի և ընտանեկան աջակցության կենտրոններով՝ երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի լիարժեք իրականացման համար,
- Հաշմանդամության գնահատման համակարգում նոր սկզբունքների և մոտեցումների ներդրում, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման և կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ,
- Սոցիալական պաշտպանության ոլորտում ընդլայնել էլեկտրոնային ծառայությունները անկախ բնակության վայրից,
- Կարգավորել և բարելավել աշխատանքային հարաբերությունները,
- Իրականացնել սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և ծառայությունների մոնիտորինգի և գնահատման էլեկտրոնային համակարգ:

Եթե մի երկու տասնամյակ առաջ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել էր միայն տարեցների սոցիալական կարիքների, մասնավորապես՝ նյութական ապահովման բավարարմանն ուղղված քաղաքականություն, ապա այժմ ՀՀ կառավարությունը փոխել է մարտավարությունը տարեցների սոցիալական պաշտպանության բնագավառում՝ տարեցների սոցիալական պաշտպանությունից ու խնամքից անցնում կատարել (պահպանելով, իհարկե, նաև այդ քաղաքիչը) դեպի առողջ և ակտիվ կենսակերպ վարելով ծերացմանն ուղղված գործողությունների իրականացում: Դա հնարավորություն է տալիս, որ մարդիկ հասկանան և օգտագործեն իրենց ֆիզիկական, սոցիալական և մտավոր ներուժը ողջ կյանքի ընթացքում և մասնակցեն հասարակական կյանքին՝ ըստ իրենց նախասիրությունների և հնարավորությունների:

#### 3.2.1 Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականության ռազմավարական ուղղությունները

Հայաստանի սոցիալական քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղություններն են.

- Բնակչության եկամուտների քաղաքականություն (կենսամակարդակ, սպառողական վամբյուղ, բարեկեցություն),
- Սոցիալական աջակցություն և բնակչության անաշխատունակ ու չքավոր շերտերի պաշտպանություն (կենսաթշակային ապահովություն, սոցիալական սպասարկում, սոցիալական երաշխիքներ և այլն),
- Սոցիալական ոլորտի ճյուղերի կարգացման հիմնական ուղղությունները (առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ),
- Սոցիալ-տնտեսական քաղաքականություն,
- Ժամանակակից սոցիալական ենթակառուցվածքների քաղաքականություն (բնակարան, տրանսպորտ, ճանապարհներ, կապ, առևտրական և կենցաղային սպասարկում),
- Գաղթի քաղաքականություն (հայրենակիցների իրավունքների և շահերի պաշտպանություն արտասահմանում, արտաքին աշխատանքային գաղթ),
- Քաղաքականություն բնակչության առանձին կատեգորիաների նկատմամբ (ընտանեկան, այդ թվում՝ երեխաների, հաշմանդամների, ծերերի, երիտասարդների, տարեցների նկատմամբ և այլն):

3.2.2

**Սոցիալական աջակցության ծառայությունները Հայաստանում**

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հիմքերը, սկզբունքներն ու ֆինանսավորումը կարգավորվում են «Սոցիալական աջակցության մասին» օրենքով: Այդ ծառայությունների տրամադրման հիմքում ընկած են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու պատասխանատվության պահպանումը: Կարևոր են նաև **հասցեականության, մատչելիության, համաչափության, խորհրդապահության և օրինականության սկզբունքները:** Հասցեականությունը ենթադրում է սոցիալական ծառայությունների տրամադրում նրանց, ովքեր իսկապես ունեն դրա կարիքը: **Մատչելիությունը** վերաբերում է տրամադրվելիք սոցիալական ծառայությունների հասանելիության ապահովմանը: **Համաչափության** սկզբունքի նպատակը տվյալ իրավիճակին համապատասխան և համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրումն է: **Խորհրդապահությունը** վերաբերում է այս ծառայությունների մատուցման համար օգտագործված անհատական տվյալների գաղտնիության պահպանմանը, իսկ **օրինականությունն** ապահովում է ծառայությունների տրամադրումը օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է հետևյալ սոցիալական ծառայությունները՝

- խորհրդատվական օգնություն,
- վերականգնողական օգնություն,
- բնափրային օգնություն,
- կացարանով ապահովում,
- խնամք,
- իրավական օգնություն,
- օրենքով սահմանված կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների նշանակում և վճարում,
- օրենքով սահմանված վբաղվածության և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունների մատուցում:

**3.2.2.1 Նպաստներ և կենսաթոշակային համակարգ**

Սոցիալական ապահովման համակարգի կարևոր բաղադրիչներն են նպաստները և կենսաթոշակները:

Հայաստանի Հանրապետությունում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը սահմանվում են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով: Համաձայն այդ օրենքի՝ պետական նպաստ է համարվում պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնությունը: Դրա նպատակներն են օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը կամ կանխել դրա վատթարացումը, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը: Օրենքի սահմանմամբ պետական նպաստի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, բնակվող և բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացիները, օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև փախստականի կարգավիճակ ունեցող անձինք:


Ինչ վերաբերում է կենսաթոշակային ապահովմանը, այն կարգավորվում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, որի մանրամասներին կծանոթանաք հաջորդ բաժնում:

**Առաջադրանք 1**

**Կապմեք** մի թռուցիկ Հայաստանի Հանրապետության համար, որը քաղաքացիներին կբացատրի սոցիալական պետություն հասկացությունը:

**Առաջադրանք 2**

**Քննարկեք** խմբերով, թե ինչու կարող է սոցիալական պետությունը միաժամանակ հիմնված լինել սոցիալական համերաշխության և անհատական սոցիալական պատասխանատվության սկզբունքների վրա:




# ԲԱԺԻՆ 4<sup>1</sup>

## ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ



### 4.1 ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵԼ ԵՎ ԿԱՐՈՂԱՆԱԼ ԽՆԱՅԵԼ

➔ Տնային տնտեսություններն ունեն բավարարիչ պատճառներ գումար խնայելու համար: Այս պատճառները տարբերվում են ոչ միայն տնային տնտեսությունից տնային տնտեսություն, այլև կարող են փոփոխվել մարդու կյանքի ընթացքում: Հետևյալ հարցումը պարզաբանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնայելու հիմնական նպատակները:



Աղբյուր՝ «Հայաստանի բնակչության ֆինանսական ունակությունները 2014» հետազոտություն

Ըստ նույն հետազոտության արդյունքների՝ Հայաստանի բնակչության 52.9%-ն իր ողջ եկամուտը ծախսում է ընթացիկ կարիքները հոգալու վրա, ինչի արդյունքում խնայելու կամ կուտակելու գումար չի մնում: Հարցվածների միայն 13%-ն է ինչ-որ գումար առանձնացնում նախքան ծախսելը, իսկ 29.6%-ը նախընտրում է խնայել այն, ինչ մնում է ընթացիկ կարիքները հոգալուց հետո:

#### Առաջադրանք 1

**Ստեղծեք** սեփական փոքրիկ փորձարարական տվյալների հավաքագրման հարցաթերթիկ երիտասարդների խնայողության դրդապատճառների վերաբերյալ:

**Անցկացրեք** հարցում ձեր դասարանում:

**Համեմատեք** ձեր արդյունքները հայերի խնայողության դրդապատճառների հետ:

**Հաշվարկեք** խնայողության տոկոսը՝ ըստ տարիքային խմբերի՝ տարրական, միջնակարգ և ավագ դպրոցի աշակերտներ:

Խնայման տոկոսը խնայվող գումարի և տրամադրության տակ եղած գումարի հարաբերության արդյունքն է:


<sup>1</sup> Աղբյուր՝ Կենսաթոշակային համակարգերի իրազեկման կենտրոն ([www.epension.am](http://www.epension.am)):

## 4.2 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

→ **Գոյություն չունի կենսաթոշակային ապահովության որևէ մեխանիզմ, որը լիարժեքորեն համապատասխանի բոլոր երկրների սոցիալ-տնտեսական համակարգերին:**

Կենսաթոշակային ապահովության սխեմայի արդյունավետ գործարկման համար կարևոր դեր են խաղում տվյալ երկրի մշակութային, քաղաքական և պատմական առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշակի չափանիշներ, որոնց վերլուծությամբ հնարավոր է գնահատել տվյալ համակարգի արդյունավետությունը: Ըստ համաշխարհային բանկի «Կենսաթոշակային բարեփոխումների ուղեցույցի» կենսաթոշակային համակարգերի ընդհանուր նախագծերի գնահատումն իրականացվում է՝ հիմնվելով որոշակի առաջնային և երկրորդային չափանիշների վրա: Այդ չափանիշների համաձայն՝ կենսաթոշակային բարեփոխումները պետք է ապահովեն համակարգի համարժեքությունը, մատչելիությունը, կայունությունը, հուսալիությունը, հավասարությունը և կանխատեսելիությունը: **Համարժեքության** սկզբունքի հիմքում ընկած է այն գաղափարը, որ կենսաթոշակային համակարգի միջոցով պետք է հնարավոր լինի կանխել բնակչության բոլոր շերտերի տարեց անդամների աղքատությունը: **Մատչելիության** սկզբունքի համաձայն կենսաթոշակային համակարգը պետք է երաշխավորի, որ համակարգը գործի բնակչության ֆինանսական հնարավորությունների սահմաններում: **Կայունության սկզբունքը** վերաբերում է կենսաթոշակային համակարգի ֆինանսական հուսալիությանը թե՛ ներկայի, թե՛ ապագայի տեսանկյունից: Կայունության ապահովման շնորհիվ խթանվում է բնակչության մասնակցությունը կենսաթոշակային համակարգերին, կենսաթոշակային ակտիվների ծավալի մեծացումը երկրի համախառն ներքին արդյունքի նկատմամբ, ինչպես նաև արտաքին պետական պարտքի մարումը:

Գոյություն ունեն նաև երկրորդային չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր է գնահատել կենսաթոշակային համակարգի դերը երկրի տնտեսական աճի ապահովման գործընթացում:



### 4.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

#### 4.3.1 Կենսաթոշակային համակարգը մինչ բարեփոխումներ

Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգը բնութագրվում էր որպես սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող բաշխողական կենսաթոշակային համակարգ: Սա նշանակում է, որ կենսաթոշակները ֆինանսավորվում էին միայն ՀՀ պետական բյուջեի ընթացիկ եկամուտներից՝ հարկերի կամ սոցիալական վճարների հաշվին: Այսինքն, աշխատող սերունդը ֆինանսավորում էր տարեց սերնդի կենսաթոշակները: Համակարգը, ըստ էության, իրականացնում էր բաշխման գործառնություն: Վարձու աշխատողների, գործատուների և անհատ ձեռնարկատերերի կատարած վճարումներն ուղղվում էին պետական բյուջե և, օրենքով սահմանված կարգով, տրամադրվում էին կենսաթոշակառուներին: Կենսաթոշակի չափը հաշվարկվում էր հիմնական կենսաթոշակի, աշխատանքային ստաժի տևողության և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի հիման վրա՝ հաշվի առնելով կենսաթոշակառուի անձնական գործակիցը (կենսաթոշակառուի անձնական գործակիցը ևս հաշվարկվում է աշխատանքային ստաժի տևողության հիման վրա):

Ցանկացած երկրի կենսաթոշակային համակարգ պետք է լուծի մեկ խնդիր. կենսաթոշակառուներին տրամադրել պատշաճ չափի կենսաթոշակներ՝ բավարար կենսամակարդակ ապահովելով կենսաթոշակառուների համար: Թեպետ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային ծրագրի մեջ շարունակաբար բավական մեծ կարևորություն է տրվել կենսաթոշակների ֆինանսավորմանը, երկրի տնտեսական իրավիճակի և դեմոգրաֆիական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ գործող բաշխողական կենսաթոշակային համակարգը հեռու էր բավարար լինելուց: Միաժամանակ իրականացված մի շարք կանխատեսումներ ու վերլուծություններ վկայել են, որ Նույնիսկ տնտեսական պարզացման ամենալավատեսական սցենարների դեպքում, գործող համակարգի շրջանակներում հնարավոր չի լինելու մեր բնակչությանն ապահովել պատշաճ կենսաթոշակով:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում գործող կենսաթոշակային ապահովության համակարգը բարեփոխելու անհրաժեշտությունը պայմանավորված էր մի շարք խնդիրներով, որոնց շարքում հարկ է առանձնացնել մի քանիսը:

→ Նախ, գործող համակարգի շրջանակներում բացակայում էր կապն անձի եկամուտների և ապագա կենսաթոշակի չափի միջև: Արդյունքում, ունեինք մի իրավիճակ, երբ բարձր որակավորում ունեցող անձը, ով ամբողջ կյանքում ստացել է բարձր աշխատավարձ, ստանում էր այնքան կենսաթոշակ, որքան ամբողջ կյանքում նվազագույն աշխատավարձ ստացած անձը, ինչն արդարացի չէր:

- Խնդրո առարկա էր նաև համակարգի ֆինանսական կայունությունը: Աշխարհում սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային համակարգերը համարվում են կայուն, երբ երեք աշխատողին բաժին է ընկնում մեկ կենսաթոշակառու, այսինքն՝ երեք աշխատողի կատարած վճարումներից գոյացած միջոցներից վճարվում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակը: Հայաստանի Հանրապետությունում մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում էր մեկ աշխատողի կատարած վճարումներից գոյացած միջոցներից: Ակնհայտ է, որ այս պարագայում իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ էին արմատական փոփոխություններ:
- Մյուս կարևորագույն խնդիրը, որը պարտադրում էր իրականացնել կենսաթոշակային բարեփոխումներ, ժողովրդագրական վիճակի պարզացման միտումներն էին: Մասնավորապես, այսօր ունենք մի իրավիճակ, երբ բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գնալով աճում է կենսաթոշակ ստացողների տեսակարար կշիռը և նվազում է աշխատանքային տարիքի անձանց տեսակարար կշիռը, կամ այլ կերպ ասած՝ արձանագրվում է «բնակչության ծերացում»: Իսկ բաշխողական կենսաթոշակային համակարգերը խիստ պայուն են բնակչության ծերացման նկատմամբ:

Այսպիսով՝ անհրաժեշտություն ստեղծվեց կատարելու կենսաթոշակային համակարգին առնչվող արմատական փոփոխություններ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ անցում կատարել

- Սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային բաշխողական համակարգերից «ինքնաֆինանսավորվող» կուտակային համակարգի,
- Հաշվարկային բանաձևերի հիման վրա սահմանված կենսաթոշակից դեպի իրական եկամուտների հիման վրա սահմանված վճարների մոդելի,
- Պետության կողմից անմիջապես կառավարվող կենսաթոշակային համակարգերից դեպի պետության կողմից կարգավորվող և վերահսկվող մասնավոր կենսաթոշակային համակարգեր:

Արդյունքում՝ որոշում կայացվեց ներդնել բազմաստիճան կենսաթոշակային համակարգ: Աշխատանքները մեկնարկեցին 2008 թվականի նոյեմբեր ամսից և սկսած 2014 թվականի հունվարի 1-ից Հայաստանում գործարկվեց բազմաստիճան կենսաթոշակային համակարգը:

**4.3.2 Կենսաթոշակային համակարգը բարեփոխումներից հետո**

Իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների նպատակն էր Հայաստանի Հանրապետությունում ներդնել բազմաստիճան կենսաթոշակային համակարգ: Այսինքն, ի լրումն սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող բաշխողական կենսաթոշակային համակարգի, ներդրվել է նաև երկու նոր՝ կուտակային և կամավոր կենսաթոշակային բաղադրիչներով համակարգ:

Բարեփոխումների արդյունքում հայաստանյան կենսաթոշակային համակարգը բաղկացած է 4 բաղադրիչներից:

- 0 աստիճան. այս աստիճանից սոցիալական կենսաթոշակ (նպաստներ) տրամադրվում է այն անձանց, ովքեր չունեն օրենքով սահմանված նվազագույն ստաժ և բոլորել են 65 տարեկանը, կամ ճանաչվել են հաշմանդամ, կամ կորցրել են կերակրողին: Այս բաղադրիչի հիմնական նպատակը աղքատության հաղթահարումն է: Սոցիալական կենսաթոշակները (նպաստները) ֆինանսավորվում են են ՀՀ պետական բյուջեից: Օրենքով սահմանված նվազագույն ստաժ չունենալու դեպքում սոցիալական կենսաթոշակի (նպաստի) իրավունք ունեն նաև այն անձինք, ովքեր հանդիսանում են կուտակային բաղադրիչի մասնակից:
- 1 աստիճան. այս աստիճանից աշխատանքային կենսաթոշակ կտրամադրվի այն անձանց, ովքեր ունեն պահանջվող նվազագույն ստաժ և բոլորել են 63 տարեկանը, կամ ճանաչվել են հաշմանդամ, կամ կորցրել են կերակրողին: Աշխատանքային կենսաթոշակները ևս ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից: Օրենքով սահմանված նվազագույն ստաժ ունենալու դեպքում աշխատանքային կենսաթոշակ է վճարվում նաև կուտակային բաղադրիչի մասնակիցներին:

0 և 1 աստիճանները կազմում են Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի պետական կենսաթոշակային բաղադրիչը:

- 2-րդ աստիճան կամ կուտակային բաղադրիչ. այս բաղադրիչից կենսաթոշակ կվճարվի կուտակային բաղադրիչի մասնակիցներին (այն անձանց, ովքեր պարտադիրության կամ կամավորության սկզբունքով կատարել են նպատակային սոցիալական վճարներ): Կուտակային կենսաթոշակները պետք է ֆինանսավորվեն նպատակային սոցիալական վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին:
- 3-րդ աստիճան կամ կամավոր կենսաթոշակային բաղադրիչ. այս բաղադրիչը պետք է ֆինանսավորի կամավոր կուտակային կենսաթոշակ կամավորության սկզբունքով կատարվող վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների միջոցով:

Այսինքն, կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում, ի լրումն գործող համակարգի, ներդրվել է նաև կենսաթոշակների ֆինանսավորման այլ աղբյուրներ, որոնք ձևավորվում են անձի կատարած վճարումներից: Մեկ անգամ ևս փաստենք, որ կուտակային բաղադրիչը ներդրվել է ի լրումն գործող կենսաթոշակային համակարգի, այլ ոչ երբեք՝ դրա փոխարեն: Պետությունը 0 և 1 աստիճանների միջոցով պահպանում է սոցիալական պատասխանատվությունն իր քաղաքացիների հանդեպ:

**4.3.3 2-րդ աստիճան կամ կուտակային բաղադրիչի մասնակիցները**

Կուտակային կենսաթոշակի պարտադիր մասնակից են 1974 թ.-ից հետո ծնված՝

- պետական ծառայողները,
- աշխատող անձինք (2018թ. հուլիսից),
- 2014թ.-ից հետո առաջին անգամ աշխատանքի անցնողները,
- անհատ ձեռնարկատերեր, նոտարներ:

Կուտակային կենսաթոշակային համակարգին կամավոր կարող են միանալ նաև բոլոր ցանկացողները:

**4.3.4 Բաղադրիչի պարտադիր լինելու սկզբունքը**

Ըստ վարքագծային տնտեսագիտության՝ մարդուն բնորոշ է բարդ և ոչ հաճելի որոշումները հետաձգելը, քանի որ դրանք պահանջում են ջանք և կարգապահություն: Օրինակ՝ ուսանողները քննությունների պատրաստվելիս թողնում են շատ բաներ մինչև վերջին օրը կամ մարկանքի գնալը հաճախ հետաձգում ենք մինչև մյուս երկուշաբթի: Մարդը, որպես կանոն, այսօրվա օգուտներին ավելի մեծ կշիռ է տալիս, քան ապագայում ստացվելիք օգուտներին, Նույնիսկ եթե այդ երկուսը տնտեսապես հավասար կշիռներ ունեն: Մարդկանց այս վարքագիծը գրեթե անհնարին է դարձնում կենսաթոշակային կուտակումները՝ 30-40 տարի ամեն ամիս կուտակել և կրճատել ներկայիս սպառումը հանուն ապագայի: Այդ պատճառով էլ մի շարք երկրներում կուտակային կենսաթոշակային համակարգը ներդրվել է որպես պարտադիր:

**Առաջադրանք 2**

**Ներկայացրեք** Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային բարեփոխումների դրոպապատճառները:

**Առաջադրանք 3**

**Պարզաբանեք** Հայաստանի Հանրապետության նախկին և ներկայիս կենսաթոշակային համակարգերի տարբերությունները:

### 4.4 ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ

➔ Յուրաքանչյուր խնայող, անգամ երբ խոսքը գնում է չնչին գումարների խնայման մասին, ունի երկու գործոնների ակդեցություն՝ ժամանակն ու տոկոսադրույքը: Մասնավորապես, շահում է նա, ով սկսում է խնայել վաղ տարիքից:

**Ուսումնասիրենք հետևյալ օրինակը:**  
 8% տոկոսադրույքի դեպքում 500 ՀՀ դրամ ներդրումը 30 տարում աճում է մինչև 5 031,33 ՀՀ դրամ: 250 տարի անց այդ գումարը կլինի 113 477 269,20 ՀՀ դրամ:

Ժամանակ և տոկոսադրույք					
8%-ի դեպքում					
t = ժամանակ	1	2	5	10	20
Ներդրված գումարի ապագա արժեք (ՀՀ դրամ)	540	583,2	734,67	1 079,46	2 330,48
t = ժամանակ	30	50	100	200	250
Ներդրված գումարի ապագա արժեք (ՀՀ դրամ)	5 031,33	23 450,81	1 099 880,63	2 419 474 792,45	113 477 269,20

Բարդ տոկոսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$K_t = K_o (1 + i)^t$$

Որտեղ K-ն ներդրված գումարն է, t-ն ժամանակը, իսկ i-ն տոկոսը (8%=0,08):

**Առաջադրանք 4**

Դուք թոշակի եք անցնելու 65 տարեկանում և մինչ կենսաթոշակային ապահովումը ցանկանում եք կուտակել 2 000 000 ՀՀ դրամի: Քանի՞ դրամ պետք է ներդնեք 20 տարեկանում 5% տոկոսադրույքի պարագայում Ձեր ցանկությունն իրագործելու համար:

**Առաջադրանք 5**

**Կատարեք** ուսումնասիրություն և համեմատեք հայկական կենսաթոշակային համակարգը այլ երկրների համակարգերի հետ:







**Sparkassen-ի**

**դպրոցական ծառայություն**

**Տնտեսական թեմաները** կյանքում շատ կարևոր դերակատարություն ունեն: Երիտասարդներն այսօր ունեն բարձր գնողունակություն: Նրանք ակտիվ սպառողներ են և, հետևաբար, համարվում են տնտեսության պոտենցիալ սպառողների թիրախային խումբ: Այդ իսկ պատճառով ընդհանուր տնտեսական հարցադրումները վերաբերում են նաև նրանց:

Ֆինանսական անձնագրի նպատակն է օգնել հասկանալ տնտեսական երևույթներն ու կարողանալ ընդունել ավելի գիտակից որոշումներ:

Դպրոցի տարբեր դասարանների համար կան ֆինանսական անձնագրեր: «Մարդիկ, շուկաներ և փող» ավագ դպրոցի ֆինանսական անձնագիրը 4 բաժիններում ներկայացնում է «Պետություն, տնտեսություն և հասարակություն», «Տնտեսություն+քաղաքականություն=տնտեսական քաղաքականություն», «Ո՞րն է սոցիալական շուկայական տնտեսության սոցիալական բաղադրիչը» և «Ունեցվածքի ձևավորում և կենսաթոշակային ապահովում» թեմաները:

Sparkassen-ի դպրոցական ծառայությունը գերմանական UNESCO-ի հանձնաժողովի կողմից որպես պաշտոնական միջոցառում ընդգրկվել է ՄԱԿ-ի տասնամյակի՝ «Կրթությունը հանուն կայուն վարձագման» Ազգային գործունեության ծրագրի միջոցառումների կատարում:



**Որպես պաշտոնական միջոցառում ընդգրկվել է համաշխարհային միջոցառումների կատարում**

**Ազգային գործունեության ծրագիր**

[www.sparkassen-schulservice.de](http://www.sparkassen-schulservice.de)